Անժել Քյուրքչյան, Լիլիթ Տեր-Գրիգորյան

ՍԱՅՐԵՆԻ

2

Վաճառքի ենթակա չէ:

Մաս 1

Անժել Քյուրքչյան, Լիլիթ Տեր-Գրիգորյան

ՄԱՅՐԵՆԻ

(2-րդ լրամշակված հրատարակություն)

Նկարիչ՝ Սուսաննա Այվազյան

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն

Երևան 2019

ՀՏԴ 373.167.1:809.198.1(075)
ԳՄԴ 81.2 Հ g72
Ք 709

**Հաստատված է
ՀՀ կրթության և գիտության
նախարարության կողմից**

Քյուրքչյան Ա.Ն, Տեր-Գրիգորյան Լ.Ա.

Ք 709 Մայրենի 2: Մաս 1/ Հանրակրթական դպրոցի 2-րդ դաս. դասագիրք/ նկ.՝ Ս. Այվազյան.- Եր.: Էդիթ Պրինտ, 2010, 88 էջ:

ՀՏԴ 373.167.1:809.198.1(075)

ԳՄԴ 81.2 Հ g72

ISBN 978-9939-52-220-3

© Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան
© «Էդիթ Պրինտ»

ԴՈՒ ՄԵՐ ԴԴՐՈՒ՛Յ ՍԻՐԵԼԻ



Գանձարանն այդ թե բանաս,
Դու կդառնաս հարուստ մարդ,
Թեև այնտեղ չես գտնի
Գոհար, ոսկի կամ արծաթ:

Սիլվա Կապուտիկյան

Իմ հա՛յ լեզու

Իմ հա՛յ լեզու, իմ մա՛յր լեզու,
Իմ լո՛ւյսն ես դու, իմ ո՛ւժն ես դու,
Մեր հին տունը՝ գանձերով[1] լի,
Դու՝ գանձատան սուրբ բանալի:

Իմ հա՛յ լեզու, իմ մա՛յր լեզու,
Իմ լո՛ւյսն ես դու, իմ ո՛ւժն ես դու,
Լեզուների շքեղ շարքում
Մնա՛ հավերժ[2], մնա՛ կանգուն:

Իմ հա՛յ լեզու, իմ մա՛յր լեզու,
Իմ լո՛ւյսն ես դու, իմ ո՛ւժն ես դու.
Երդվում եմ՝ քեզ պահել պայծառ
Ու հասցնել դարերից դար:

[1] **գանձ** - հարստություն
[2] **հավերժ** - միշտ

գանձ
գանձապուն
գանձարան

Հարցեր և առաջադրանքներ

1. *Բանաստեղծուհին ինչերի՞ հետ է համեմատում հայոց լեզուն. ինչու՞:*
2. *Բանաստեղծության ո՞ր տողերի մեջ է տրված դրա պատասխանը. կարդա այդ տողերը:*
3. *Փոքրիկը ի՞նչ երդում է տալիս. իր խոստումը կատարելու համար նա ի՞նչ պետք է անի:*

Պապիկի խրատներից

Փոքրիկս, սիրի՛ր, լա՛վ սովորիր և մաքո՛ւր պահիր մեր անուշիկ հայոց լեզուն:

Լեզու, գանձ, հավերժ, շքեղ, պայծառ բառերը գործածի՛ր նախադասությունների մեջ:

Խաչիկ Դաշտենց

Մեսրոպ Մաշտոցին

Ո՞վ մեծագործ
Մեսրոպ Մաշտոց,
Մեր առաջին
Բացված դպրոց:

Մեր առաջին
Լեզվի տաճար,
Լուսապայծառ
Հայոց հանճար[1]:

Ամեն գիրդ՝
Վառվող ճրագ,
Մեզ հայ պահող
Անմար[2] կրակ:

Դու մեր մեծ պապ
Հացիկ գյուղից,
Մշո դաշտի
Քաղցրիկ հողից:

Շրթունքներով
Մեր մանկական
Քեզ հազար փա՞ռք
Հավերժական[3]:

առաջ
առաջին

[1] **հանճար** - մեծ տաղանդ
[2] **անմար** - չմարող, միշտ վառ մնացող
[3] **հավերժական** - հավերժ

Հարցեր և առաջադրանքներ

1. *Ո՞վ է Մեսրոպ Մաշտոցը. պատմի՛ր՝ ի՞նչ գիտես նրա մասին:*

2. *Կարդա՛ բանաստեղծության այն տողերը, որոնք բնութագրում են Մեսրոպ Մաշտոցին:*

3. *Հայերեն գրերը ինչո՞ւ են համեմատվում վառվող ճրագի հետ:*

4. *Փորձի՛ր բացատրել՝ ի՞նչ միտք է արտահայտված վերջին քառատողում:*

5. *Անգի՛ր սովորիր այս բանաստեղծությունը և արտասանիր արտահայտի՛չ ու հանդիսավո՛ր:*

Օգտվելով բանաստեղծությունից՝ տրված երկու շարք բառերից ընտրի՛ր հարմար զույգեր և կազմի՛ր բառերի կապակցություններ.

- *մանկական, մեծագործ, անմար, հայոց, մեծ.*
- *պապ, շրթունքներ, կրակ, հանճար, Մաշտոց:*

Օրինակ՝ անմար կրակ:

Գիտե՞ս, որ...

Երկու բառերի այսպիսի կապակցությունը կոչվում է բառակապակցություն:

	Քո կազմած բառակապակցություններից չորսը գործածի՛ր նախադասությունների մեջ:

Լուսիկ Բառնակյան

Առաջին ուսուցչուհին

Անցան ամառային արձակուրդի օրերը: Վարդուհիենց դասարանի դռան վրա գրվեց II^ա դասարան: Առաջին դաս. նոր ուսուցչուհի. տխրեց Վարդուհին:

Խոսում էր նոր ուսուցչուհին, իսկ Վարդուհին ասես լսում էր իր առաջին ուսուցչուհու ձայնը: Նայում էր նոր ուսուցչուհուն, և աչքերի առաջ կանգնում էր իր առաջին ուսուցչուհին:

Այդ պահին ուսուցչուհին կարդաց Վարդուհու անուն-ազգանունը. Վարդուհին սթափվեց, ոտքի կանգնեց ու մանրաքայլ մոտեցավ գրատախտակին:

– Վարդուհի՛, վերցրո՛ւ կավիճը և ուշադիր գրի՛ր...

Վարդուհին գրում էր ուսուցչուհու թելադրած նախադասությունը:

Գրում էր գեղեցիկ, ճիշտ: Ամառային արձակուրդի ընթացքում նա մանկական գրքեր էր կարդացել և ոչ մի տառ չէր մոռացել: Ուրախանում էր ուսուցչուհին:

Բայց այդ ի՞նչ է. փոքրիկը մեծ ջանք էր թափում, որպեսզի գրելու ժամանակ վեր պահեր փոքրիկ ճկույթը: Ուսուցչուհին մոտեցավ, օգնեց, որ ծալի ճկույթը: Վարդուհին շիկնեց:

– Չե՞ս կարողանում, – հարցրեց ուսուցչուհին:

– Կարող եմ:

– Հապա ի՞նչ...

– Մեր առաջին ուսուցչուհին՝ տիկին Սահակյանը, այդպես էր բռնում կավիճը, – կմկմաց աղջիկը:

Ժպտաց նոր ուսուցչուհին, փոքրիկի գլուխը գրկեց և ամո՜ւր-ամո՜ւր սեղմեց կրծքին:

Հարցեր և առաջադրանքներ



1. *Վարդուհին ինչո՞ւ տխրեց:*

2. *Նա ինչո՞ւ էր ուզում նմանվել իր առաջին ուսուցչուհուն:*

3. *Նոր ուսուցչուհին ինչո՞ւ հուզվեց Վարդուհու արարքից:*

*«**Իմ օգնականը**» գրքից սովորեցե՛ք «**Իմ ուսուցիչը**» երգը և երգեցե՛ք դասարանում:*

Ասացվածք

Հարգի՛ր ուսուցչիդ, ինչպես՝ ծնողիդ:

բթամատ
ցուցամատ
միջնամատ
մատնեմատ
ճկույթ

Ուսուցչուհի, արձակուրդ, ձայն, ճկույթ, *գրատախտակ* բառերով կազմի՛ր բառակապակցություններ:

Օրինակ՝ *բարձր* ձայն:

Ըստ Լևոն Շանթի

Կես խնձոր

Մի քանի աշակերտներ խմբվել էին դասարանում և ուրախ-ուրախ խոսում էին ու ծիծաղում:

Նրանցից բոլորովին առանձին կանգնած էր նորեկ մի *աշակերտուհի,* որի վրա մյուսները *ոչ* մի ուշադրություն չէին դարձնում: Աղջիկը շատ մենակ, խորթ ու անհարմար էր զգում այդ օտար շրջապատում: Ուզում էր ամեն ինչ թողնել ու վազել գնալ տուն:

Աչքերը արդեն լցվել էին, երբ դասարանի դուռը թափով բացվեց, ու ներս նետվեց սևաչ, կարմրաթշիկ մի *աղջիկ:* Աղջնակը գնաց խմբով կանգնած աշակերտների մոտ և սկսեց խոսել ու կատակել նրանց հետ:

Հանկարծ նկատեց նորեկ աղջկան: Իսկույն մոտեցավ նրան:

–Բարև՜,–ասաց անուշ ձայնով:

–Բարև՜,–պատասխանեց աղջիկը, և դեմքը պայծառացավ:

Սևաչյա աղջիկը պայուսակը սեղանին դրեց, ձեռքերը շփեց իրար և գրպանի խորքից դժվարությամբ հանեց մի խոշոր *խընձ-*

ձոր: Կիսեց ու ժպտալով մի կըտորը տվեց նորեկին:

– Խնձոր սիրում ես, չէ՞:

– Այո՛, – պատասխանեց նորեկը՝ ինքն էլ մեղմ ժպտալով,– ինչո՞ւ չէ:

– Իմ անունը Հուրիկ է, իսկ քո՞նը:

– Իմ անունը Սեդա է:

– Այդ ի՜նչ *գեղեցիկ* անուն ունես: Տե՛ս, ինձ մոտ ազատ տեղ կա, ուզո՞ւմ ես մոտս նստել:

– Սիրո՜վ:

Ու *երկու* աղջիկները միասին նստեցին նույն նստարանին. կրծոտում էին խնձորը և փսփսում էին ծանոթների պես, մինչև որ հնչեց դասի զանգը:

Ուսուցչուհին ներս մտնելուն պես նայեց շարքերին, կարծես մեկին էր փնտրում: Ահա տեսավ. նորեկը նստել էր Հուրիկի կողքին: Նայեց նրա *զվարթ* աչքերին ու ժպտաց:

– Լավ *ընկեր* ես գտել, Սեդա՛, – ասաց նա հանգստացած:

Եվ Հուրիկն ու Սեդան մտերիմ ընկերուհիներ դարձան. Հուրիկը կես խնձորով *ձեռք* բերեց իր կյանքի լավագույն ընկերուհուն...

սև
սևաչյա

Հարցեր և առաջադրանքներ

1. *Նորեկ աշակերտուհին ինչո՞ւ էր հուզված:*
2. *Ուսուցչուհին ինչո՞ւ հանգստացավ, երբ նրան Սեդայի կողքին տեսավ:*
3. *Սեդան իսկապե՞ս կես խնձորով ձեռք բերեց իր մտերիմ ընկերուհուն, թե՞...*

Իսկ դու կարո՞ղ ես քո մասին ասել.

	այո՛	ո՛չ
Ես ընկերասեր եմ:	☐	☐
Ես ուշադիր ընկեր եմ:	☐	☐

Քանի՞ հնչյուն և քանի՞ տառ ունեն հետևյալ բառերը.

ընկեր, ծիծաղ, մտերիմ, որդի, բարև, երգ:

Օրինակ՝ *ծիծաղ* - *5 հնչյուն, 5 տառ.*
մտերիմ - 7 հնչյուն, 6 տառ:

Հիշո՞ւմ ես, որ....

Հնչյունն *արտասանում և լսում ենք:*
Տառը *գրում և կարդում ենք:*
Հայերենն ունի 36 հնչյուն, որոնք գրվում են 38 տառերով:

	Տեքստից արտագրի՛ր *թեք գրված* բառերը և գրի՛ր՝ քանի՞ հնչյուն և քանի՞ տառ ունեն դրանք:

Վահան Գրիգորյան

Դպրոցի ճամփան

Գնում ենք ուրախ, ձեռք ձեռքի տված,
Երգում միասին՝ աղջիկ ու տղա,
Փռված է մեր դեմ մոր գրկի պես բաց
Գեղեցիկ ու լայն դպրոցի ճամփան:

Վազում է մեզ հետ, աղմկում առուն,
Հեզ[1] օրորվում են ծառերը աշնան,
Բոլորիս սիրով կանչում է, տանում
Գեղեցիկ ու լայն դպրոցի ճամփան:

Ձգվում է տնից մինչև դասարան
Մանուկ օրերի ոսկեհյուս[2] շղթան՝
Այնպե՜ս մտերիմ, այնպե՜ս հարազատ
Գեղեցիկ ու լայն դպրոցի ճամփան:

[1]**հեզ** – այստեղ՝ մեղմորեն, հանդարտ
[2]**ոսկեհյուս** – այստեղ՝ մանկական գեղեցիկ հուշերով ու երազանքներով լի

Ճամփա
Ճամփորդ
Ճամփորդել

Հարցեր և առաջադրանքներ

1. *Նկարագրի՛ր դպրոցի ճամփան՝ ըստ բանաստեղծության:*
2. *Ինչպիսի՞ն է քո դպրոցի ճամփան. նկարագրի՛ր:*

Օգտվելով բանաստեղծությունից՝ կազմի՛ր բառակապակցություններ և կարդա՛.

ուրախ	*ընկեր*
հեզ	*ճամփա*
լայն	*գնալ*
մանուկ	*շղթա*
ոսկեհյուս	*օրեր*
գեղեցիկ	*օրորվել*
մտերիմ	*ծառեր*

Կարդա՛ հետևյալ երկու խումբ տառերը և ուշադրությո՛ւն դարձրու այդ հնչյունների արտասանությանը.

ա, է, ի, ը, օ, ու.

բ, գ, լ, վ, գ, ռ...

Հիշո՞ւմ ես, որ....

Հնչյունները լինում են երկու տեսակ՝ ձայնավոր և բաղաձայն:

Ձայնավորներն արտասանվում են երկար ու ազատ (ա՛, է՛, ի՛...):

Բաղաձայններն արտասանվում են կարճ և ը ձայնավորի օգնությամբ (բ - բը, գ - գը...):

Ի՞նչ ձայնավոր և բաղաձայն հնչյուններ ես լսում հետևյալ նկար-բառերի մեջ. գրի՛ր դրանք առանձին սյունակներով.

,

,

,

,

,

,

:

Օրինակ՝

ձայնավոր	*բաղաձայն*
(ե)	ս

Սուրեն Մուրադյան

Իմ դասագրքերը

Ճի՛շտ է, գրքերը
Գիտելիքներ են
Ինձ տվել կյանքում,
Թևեր պարգևել
Իմ մտքին, հոգուն,

Բայց թե ինչպե՛ս եմ
Սիրել աշխատանք,
Սիրել բնություն,
Հողը, վար ու ցանք,
Սովորեցրել են

Գրքերի պես լավ
Հորս կոշտացած,
Հողոտ ձեռքերը,
Որոնք դարձել են
Իմ ամենալավ
Դասագրքերը:

Ճիշտ է, մանկության
Հեքիաթներով եմ
Բարությամբ սնվել,
Չարի դեմ կռվող
Հերոսներն են ինձ
Քաջություն տվել,
Սակայն մայրական
Քնքշանքն ու սերը,
Օրհնանքով օծված[1]
Բարի խոսքերը,
Ջերմությամբ լցված
Գորովանքները[2]
Դարձել են կյանքում
Իմ առաջին սուրբ
Դասագրքերը:

[1]**օրհնանքով օծված** – այստեղ՝ օրհնանքով լցված
[2]**գորովանք** – սեր, քնքշանք

հեփիաթ
հեփիաթային
հեփիաթասաց

Հարցեր և առաջադրանքներ

1. *Գրքերը ի՞նչ են տվել բանաստեղծին:*
2. *Ինչե՞րն են դասագրքեր դարձել բանաստեղծի համար:*
3. *Նա ի՞նչ է սովորել այդ դասագրքերից:*

*Դասարանում կարդացեք Միլվա Կապուտիկյանի «**Այս գիրքը**» բանաստեղծությունը և որոշեցեք՝ գիրքը ե՞րբ օգուտ կտա ձեզ:*

Հանելուկ

Տուն է՝ սպիտակ, լայնապարած,
Սև հավիկներ մեջը թառած,
Խոսում են ու զրույց անում՝
Մարդու նման լեզու առած:

Կարդա՛ և որոշի՛ր այս բառերի ձայնավոր հնչյունները.
անուն, օգնել, հոգի, էջ, ընկեր:

Գիշո՞ւմ ես, որ...

Հայերենն ունի 6 ձայնավոր հնչյուններ, որոնք գրվում են 8 տառերով՝ ա, է(ե), ի, ը, ու, օ(ո):

Է և օ տառերը գրվում են բառասկզբում, իսկ (ե) և (ո) տառերը՝ բառամիջում և բառավերջում:

Տրված բառերի ձայնավորները փոխելով՝ ստացի՛ր նոր բառեր ու գրի՛ր.

լուռ ե	վեր ա	շող ա ե
ծառ ու	գեր ի	հարթ ո ե

Երեք հարուստ

(հեքիաթ)

Երեք մարդ վիճում էին ու չէին կարողանում որոշել, թե իրենցից ո՛վ է հարուստը: Գնում են Խիկար Իմաստունի մոտ:

– Մենք, – ասում է առաջինը, – եկել ենք իմանալու, թե մեզանից ո՛վ է հարուստը:

– Դո՛ւ խոսիր, – դիմում է Խիկար Իմաստունը առաջինին:

– Ես ոսկու և արծաթի, արտ ու արոտի տեր եմ, իմ հարստությանը չափ չկա:

– Դո՞ւ ինչ կասես, – հարցնում է երկրորդին:

– Ես այսինչ թագավորի զորապետն եմ, ես երեք անգամ ավելի հարուստ եմ իմ թագավորից:

– Դո՛ւ էլ խոսիր, տեսնենք, – դիմում է երրորդին:

– Ես, – ասում է երրորդը, – ո՛չ ոսկի ու արծաթ, ո՛չ արտ ու արոտ, ո՛չ մի ունեցվածք էլ չունեմ. ես գիտուն մարդ եմ, իմ ունեցածը գլխումս է:

– Այս գիտուն մարդը ձեր երկուսից ավելի հարուստ է. նրա հարստությունը ո՛չ կարող եք տեսնել և ո՛չ կարող եք խլել, – ասում է Խիկար Իմաստունն ու նրանց վեճը լուծում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Խիկար Իմաստունը երեք ընկերներից ո՞ւմ համարեց ամենից հարուստը. ինչո՞ւ:
2. Ի՞նչ է սովորեցնում այս հեքիաթը:

Դասարանում կարդացե՛ք «**Խելացի գողան**» պատմությունը:

թագ
թագավոր
թագուհի

Առակներ

- Ինչքան իմանաս, մի՛ ասա՝ բավ է,
  Թե շատ իմանաս, ավելի լավ է:
- Գիրքը ուժ է:
- Գիրքը մարդու ամենալավ օգնականն է:
- Կյանքում խելքն ավելի կարևոր է, քան ուժը:

Կարդա՛ և որոշի՛ր՝ յուրաքանչյուր բառ քանի՞ հնչյուն և քանի՞ տառ ունի.

ելակ, եղնիկ, երեկո, երեք.

ոսկի, ոզնի, ոսկոր, ոսպ:

Հիշո՞ւմ ես, որ...

լակ

զնի

Բառասկզբում

ե = յ + է , ո = վ + օ :

Ուշադրությո՛ւն.

ով
ովքեր

ո = օ

1. Արտագրի՛ր՝ կետերի փոխարեն գրելով ենք կամ եք.

Ողջույն ուսուցչին

Ողջունում .... սրտագին,
Ուսուցի՛չ մեր թանկագին,
Դուք ժպիտ .... պարգևում
Ու ջերմ խոսքեր շշնջում:

Լույսի շողեր .... տալիս
Դուք Ձեր ուշիմ սաներին,
Մենք նայում .... Ձեզ ինչպես
Ծաղիկները արևին:

Ն. Միքայելյան

Ուշադրությո՛ւն.

գրում
- եմ
- ես
- է
- ենք
- եք
- են

2. Երազ, երկինք, որդի, ողկույզ բառերով կազմի՛ր բառակապակցություններ և դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:

3. Տրված անուններն իրար միացնելով՝ կազմիր նո՛ր անուններ և գրիր ճի՛շտ ուղղագրությամբ (կարող ես կազմել 8 նոր անուն): Աղջկա և տղայի անունները գրի՛ր առանձին սյունակներով:

Օրինակ՝ *Արամ* + *Աշոտ* = *Արամ**ա**շոտ*:



Թեմայի ամփոփում

Տպչիկի խրատներից

Մտերմիկ խրատ

Լսի՛ր, սիրո՛ւն իմ Ժիրիկ,
Խրատը այս մտերմիկ.
Ժամանակդ խնայի՛ր,
Օրվա հաշիվը պահի՛ր:
Խաղի ժամին խա՛ղ արա,
Վազվզի՛ր ու թռվռա՛,
Սակայն երբ որ կգաս տուն,
Բա՛ց դասագիրքդ իսկույն:
Դասերդ լա՛վ սովորիր,
Գիրն ու գիրքը շա՛տ սիրիր,
Սիրի՛ր լեզուն մեսրոպյան՝
Մեր մայրենին աննման.
Նա գանձն է մեր մնայուն,
Նա՛ է հային հայ պահում:

Սիլվա Կապուտիկյան

1. *Ո՞վ է հայ ժողովրդի առաջին ուսուցիչը. ինչո՞ւ:*
2. *Դու ի՞նչ պետք է անես, որ Մեսրոպ Մաշտոցի արժանի թոռնիկը լինես:*
3. *Բացատրի՛ր հետևյալ ասացվածքները.*
   - Գիրքը մեր լավագույն բարեկամն է.
   - Գիրքը անսահման հարստություն է.
   - Ամենալավ խաղալիքը միտքն է,
     Ամենալավ ուղեկիցը գիրքն է:
4. *Ի՞նչ բանաստեղծություններ գիտես գրքի մասին. արտասանի՛ր դրանցից մեկը:*
5. *Ո՞րն է քո ամենասիրելի գիրքը. ինչու՞:*
6. *Նկարագրի՛ր՝ ինչպիսի՞ն է քո ուսուցիչը:*
7. *Արտասանի՛ր ուսուցչին նվիրված քո իմացած բանաստեղծություններից մեկը:*

ՄԵՐ ՏՈՒՆԸ



Նկարեցի
Մի մեծ արև,
Կապույտ երկինք,
Կանաչ փերև,
Մի աղավնի՝
Ճերմա՛կ - ճերմա՛կ,
Մի քարե փուն,
Մի կանաչ բակ,
Հեփո՝ քույրիկ,
Մի լավ մայրիկ,
Մի լավ հայրիկ,
Իսկ վերջում էլ՝
Մի քաջ վինվոր,
Որ պահպանի
Այդ բոլորը
Գիշեր ու կոր:

Պապվական Խաչատրյան

Հայրս դաշտից տուն եկավ

Երեկոյան, երբ մութն ընկավ,
Վար ու ցանքից հայրս եկավ.
Ուսին ամպի արցունք բերեց,
Ծիլ ու ծաղկի բուրմունք բերեց,
Առվի զուլալ կարկաչ բերեց,
Հովի նվագ ու կանչ բերեց,
Թռչունների դայլայլ բերեց,
Աստղերի խինդ ու փայլ բերեց,
Բերեց անափ[1] ուրախություն,
Հայրական սեր ու բարություն...
Ինչե՞ր ասես, որ չբերեց,
Բերե՞ց, մեր տունը շենացրեց[2]:

[1] **անափ** – անսահման
[2] **շենացնել** – այստեղ՝ շեն՝ հարուստ և ուրախ դարձնել

Հարցեր և առաջադրանքներ

1. *Փոքրիկի հայրը դաշտից ինչե՞ր բերեց ու շենացրեց տունը:*

2. *Դո՞ւ ինչ ես զգում, երբ հայրիկդ տուն է գալիս. պատմի՛ր:*

Բանաստեղծության մեջ գտի՛ր պատկերավոր արտահայտություններն ու գեղեցիկ բառակապակցությունները և գրի՛ր գիրք-տետրում:

Առաջադրանք

Աշխարհի մեջ ամեն ինչ կարող ես ձեռք բերել՝ բացի ծնողներից:

բույր
բուրել
բուրմունք

Տատիկի խրատներից

Հայրը տան սյունն է:
Փոքրիկս, հետևի՛ր հայրիկիդ խորհուրդներին:

Որոշի՛ր, թե հետևյալ բառերում և-ը քանի՛ հնչյունի նշան է. գրի՛ր առանձին սյունակներով.

եղևնի, սերկևիլ, Եվգինե, հարևան, Եվրոպա, նաև, թեև, եղրևանի, Տաթև:

Օրինակ՝

և = է + վ	և = յ + է + վ
եղևնի	*նաև*

Այս բառերից երեքը գործածի՛ր նախադասությունների մեջ:

Խաժակ Գյուլնապարյան

Բարի լո՛ւյս, մայրի՛կ

1

Ես մեր բակի ամենալավ Գեղամն եմ: Ասենք, մեր բակում միայն մի Գեղամ կա: Մի Գեղամ կա, երկու Ռուբիկ, մի Ռուդիկ, չորս Արա՝ աղջիկներին չհաշված:

Ես ամեն օր մայրիկիս ասում եմ.

–Բարի լո՛ւյս, մայրի՛կ:

Նա համբուրում է ինձ, հետո կաթ է տալիս, կամ... ձկան յուղ: Կաթը լավ է, ձկան յուղը՝ վատ, այնքան վատ, որ ես առավոտները չեմ ուզում արթնանալ: Ասենք, արթնանում եմ, բայց աչքերս փակում եմ, որ մայրիկը չիմանա:

Ես մեր բակի ամենալավ Գեղամն եմ: Մայրիկն ամեն օր այդպես է ասում ինձ՝ ձկան յուղ խմեցնելիս: Ես էլ ձկան յուղը խմում եմ, քանի որ մայրիկս այդպես է ասում...

Ես ափսեն կոտրեցի: Բանն այն է, որ մեջը մուրաբա կար: Ասացի, թե փիսոն է կոտրել: Մայրիկը հավատաց. մայրիկն ամեն

ինչի հավատում է:

–Վատ է,–ասաց,–փիսոյին պետք է տնից քշել:

Քշեց: Քնեցինք:

–Բարի լո՜ւյս, մայրի՜կ,–առավոտյան ասացի մայրիկիս:

Նա համբուրեց ինձ, հետո ձկան յուղը բերեց.

–Դու մեր բակի ամենալավ Գեղամն ես,–ասաց:

Ձկան յուղը խմեցի: Իսկ փիսոն չկար. մայրիկը նրան դուրս էր արել:

–Դու խաղա՛,–ասաց մայրիկը,–ես գնում եմ շուկա:

Գնաց:

2

Մենակ հետաքրքիր չէր: Խաղացի, ձանձրացա, հետո բակ գնացի:

Տղաներն ինձ քշեցին:

–Փոքրիկ ես,–ասաց մի Արա:

–Ոտքի տակ մի՛ ընկնի,–ասաց մի Ռուբիկ:

Գնացի տուն: Հետո դրսում անձրև եկավ: Տղաները բակից հեռացան: Իսկ փիսոն թրջվեց. մայրիկը նրան դուրս էր արել... Տխրեցի:

Ամբողջ գիշեր անձրև էր գալիս, իսկ ես մտածում էի ափսեի մասին, որի մեջ, հակառակի նման, մուրաբա կար. դրա համար էլ ընկավ, կոտրվեց...

Մտածում էի, և լացս գալիս էր: Քնում էի, իսկ փիսոն երազումս գալիս նստում էր անկյունում, թաթով սրբում էր աչքերն ու տխո՜ւր-տխո՜ւր մլավում...

Առավոտյան մայրիկիս ասացի.

–Բարի լո՜ւյս, մայրի՜կ:

Նա ձկան յուղը բերեց.

– Դու մեր բակի ամենալավ Գեղամն ես:

– Ո՜չ, մայրի՜կ, – ասացի, – փիսոն մեղք չունի. ափսեն ես եմ կոտրել. մեջը մուրաբա կար...

Մայրիկը համբուրեց ինձ.

– Ապրե՛ս, որ ասացիր. էլ այդպիսի բան չանես:

– Փիսոն...

– Կբերենք, – գոհ ժպտաց մայրիկը:

Փիսոյին տուն բերեցինք: Որ իմանաք, թե ինչքա՜ն լավ է: Ամեն առավոտ մայրիկիս ասում եմ.

– Բարի լո՜ւյս, մայրի՜կ:

Նա բերում է ձկան յուղը.

– Դու մեր բակի ամենալավ Գեղամն ես:

Փիսոն անկյունում խաղում է իմ թավշյա[1] արջուկի հետ...

[1]**թավշյա** - թավշից՝ նուրբ՝ փափուկ խավ ունեցող կտորից պատրաստված

անչրև
անչրևել

Հարցեր և առաջադրանքներ

1. *Գեղամը ինչո՞ւ էր հուզվում և դանջվում ամբողջ գիշեր:*
2. *Նա ե՞րբ հանգստացավ. ինչո՞ւ:*
3. *Մայրիկը ինչո՞ւ գոհ ժպտաց:*
4. *Քեզ հետ երբևէ այդպիսի դեպք պատահե՞լ է. պատմի՛ր կամ հորինի՛ր նման մի պատմություն:*

Հանելուկ

Մուշտակ ունի շատ փափուկ,
Տեղ է փնտրում միշտ դաքուկ:

Խնդ դու կարո՞ղ ես քո մասին ասել.

	այո՛	ո՛չ
Ես ճշմարտախոս եմ:	☐	☐
Ես չեմ վախենում իմ սխալը խոստովանելուց:	☐	☐

Հիշո՞ւմ ես, որ...

Բառասկզբում Է լսելիս գրում ենք Է:

Բառամիջում և բառավերջում Է լսելիս գրում ենք Ե:

Էջ, Էկրան, Էմին, Էջմիածին.

գիշեր, ափսե, Գեղամ, կոտրել:

Ուշադրություն.



1.	Գրի՛ր բառասկզբի Է և բառամիջի (Ե) ունեցող 5-ական բառ: Երկուական բառ գործածի՛ր նախադասությունների մեջ:
2.	Ամբողջացրո՛ւ նախադասությունները՝ օրինակի պես.

Ոչխարը մայում է:	*Գայլը ... :*
Կատուն ... :	*Այծը ... :*
Ծունը ... :	*Ձին ... :*
Կովը ... :	*Առյուծը ... :*

Նանսեն Միքայելյան

Երգ մայրիկիս

Երկինքն իմն է
Իր կապույտով,
Երբ մայրիկիս
Աչքերը կան,
Ու ժպտում են
Մեղմ ժպիտով
Մթնշաղի
Աստղերն անգամ:

Գարունը ինձ
Ջերմ գրկում է,
Երբ մայրիկիս
Ձեռքերը կան,
Եվ զով հովը
Մեղմ շոյում է,
Երբ մայրիկիս
Երգերը կան:

Իմ երգի մեջ
Ամառ-ծմեռ
Երջանկության
Աղբյուրը կա,
Միշտ գարուն է
Սրտիս համար,
Երբ մայրիկիս
Համբույրը կա:

երգ
երգիչ
երգչուհի

Հարցեր և առաջադրանքներ

1. *Մայրիկը ինչպե՞ս է իր սերն ու ջերմությունը հաղորդում իր բալիկին:*
2. *Գրողը ինչերի՞ հետ է համեմատում մայրիկի* ***աչքերը, ձեռքերը, երգերը, համբույրը.*** *կարդա՛ այդ տողերը:*
3. *Անգի՛ր սովորիր այս գողտրիկ բանաստեղծությունը և արտասանիր սիրո՛վ ու ջերմությա՛մբ:*

Կազմի՛ր բառակապակցություններ և կարդա՛.

ջերմ → *գրկել*
մեղմ
անուշ
քնքուշ
ջերմ → *ժպտալ*
շոյել
համբուրել
երգել

Դրանցից երեքը գործածի՛ր նախադասությունների մեջ:

Կարդա՛ ոտանավորը և ասա՛, թե բառերի սկզբում ինչո՛ւ է **ե** գրված.

Երանիկը

Երանիկը
Երկինք թռավ
Երազում
Ու **ե**րբ զարթնեց,

Նա **ե**ղբորն էր
Համոզում,
Թե **ե**րկնքից
Աստղ է բերել
Իր հետ տուն:

Գ. Գաբրիելյան

Հիշո՞ւմ ես, որ...

Բառասկզբում յէ լսելիս գրում ենք ե:

	«Երգ մայրիկիս» բանաստեղծությունից արտագրի՛ր **ե**-ով սկսվող բառերը և գործածի՛ր նախադասությունների մեջ:

Փ. Աթրե

Մայրիկի հաշիվը

1

Դինու անունով մի հնդիկ տղա կար: Նրա հայրը նշանավոր բժիշկ էր: Դինուն երբեմն տեսնում էր, թե նա ինչպե՛ս էր դեղեր տալիս հիվանդներին ու հաշիվ գրում: Ու մի օր տղան հարցրեց.

–Հայրի՛կ, ի՞նչ է հաշիվը:

Հայրը վերցրեց սեղանի վրա դրված հաշիվներից մեկը և տվեց որդուն:

Դինուն կարդաց. *«Դիվանդ Ջոնը պարտք է ինձ՝ երկու այցելության համար՝ 6 ռուփի՛, երեք սրսկման համար՝ 9 ռուփի, դեղերի արժեքը՝ 5 ռուփի. ընդհանուր գումարը՝ 20 ռուփի»:*

Հայրիկի հաշիվը Դինուին շատ դուր եկավ: Ամբողջ օրը նա այդ մասին էր մտածում:

Հաջորդ օրը Դինուի մայրը հիվանդացավ: Տան բոլոր գործերը մնացին: Հենց որ Դինուն դպրոցից վերադարձավ, անմիջապես գործի անցավ. ափսեները լվաց, փոքր եղբորը խնամեց, խանութ գնաց: Գիշերը, երբ պատրաստվում էր քնելու, որոշեց կազմել այդ օրը մայրիկի համար կատարած գործերի հաշիվը: Մի թուղթ վերցրեց ու գրեց. *«Մայրիկը ինձ պարտք է՝ ափսեները լվանալու համար՝ 1 ռուփի, փոքր եղբորս խնամելու համար՝ 2 ռուփի, խանութ գնալու համար՝ 1 ռուփի. ընդհանուր գումարը՝ 4 ռուփի»:* Հետո նա այդ հաշիվը կամացուկ դրեց մայրիկի բարձի վրա և գնաց քնելու:

2

Հաջորդ օրը՝ առավոտյան, Դինուն իր բարձի վրա 4 ռուփի գտավ: Ուրախությանը չափ չկար, որ մայրը վճարել էր իր կատարած աշխատանքի համար: Սակայն նկատեց, որ դրա հետ մի թուղթ էլ կար: Դինուն բաց արեց թուղթը և տեսավ, որ մայրն էլ

իրեն էր հաշիվ գրել. *«Դինուն ինձ պարտք է՝ մանկությունից մինչև հիմա իրեն պահելու և խնամելու համար՝* ***ոչինչ****, հիվանդ ժամանակ անցկացրած անքուն գիշերների համար՝* ***ոչինչ****, կատարած բազմաթիվ չարությունների ու գժությունների համար՝* ***ոչինչ****. ընդհանուր գումարը՝* ***ոչինչ****»:*

Դինուի աչքերը լցվեցին արցունքով: Նա ամոթից կարմրեց և անմիջապես վազելով մոր մոտ՝ փաթաթվեց նրան:

– Սիրելի՜ մայրիկ, աղաչո՜ւմ եմ, ների՜ր ինձ, որ քեզ հիմար հաշիվ էի գրել, – արցունքների միջից ասաց նա և չորս ռուփին վերադարձրեց մորը:

– Հանգստացի՛ր, որդի՛ս, հիմա արդեն իմ հաշիվն էլ փակվեց, – ասաց մայրը՝ համբուրելով իր սիրելի Դինուին:

[1]**ռուփի** – հնդկական դրամ

համբույր
համբուրել

Հարցեր և առաջադրանքներ

1. *Դինուն ինչի՞ մասին հաշիվ գրեց մայրիկին. նա ճի՞շտ վարվեց:*
2. *Մայրը ինչպե՞ս ուղղեց որդու սխալը:*
3. *Ի՞նչ է սովորեցնում այս դասը:*
4. *Համառոտ պատմի՛ր պատմության մասերի բովանդակությունը և վերնագրի՛ր դրանք:*

*Տանը կարդա՛ «**Երբ հիվանդ է մայրիկը**» պատմությունը:*

Ասացվածքներ

- *Հասկացողին մի՛ն ասա,*
  Չհասկացողին՝ հազար ու մի՛ն:
- *Ով որ իր մեծի խրատը լսի,*
  Իր գործերի մեջ միշտ կհաջողի:

Տպիչի խրատներից

Մայրական սիրտն ամեն ինչ ներում է:
Փոքրի՛կս, մի՛ վշտացրու մայրիկիդ. մի՛ կոտրիր նրա սիրտը:

1. Տրված երկու շարք բառերի միջից գտի՛ր իրար հակառակ իմաստ ունեցող բառերը և գրի՛ր օրինակի պես.

• *չար, շատ, վերցնել, գիշեր, մոտ, վրա, հիմար, բացել, քնել, ուրախություն, հիվանդ.*

• առողջ, դնել, հեռու, տակ, ցերեկ, փակել, արթնանալ, տխրություն, բարի, քիչ, խելացի:

Օրինակ՝ *վերցնել* - դնել:

2. Արտագրի՛ր՝ համապատասխան բառը գրելով.

Գարնանային (պայծառ, մռայլ) առավոտ էր: Արևը փայլում էր (ջինջ, ամպամած) երկնքում: Թռչուններն (ուրախ, տխուր) ճռվողում էին անտառում:

Փոքրիկ եղնիկը (մտավ, դուրս եկավ) անտառից: Նա զգույշ (մոտեցավ, հեռացավ) աղբյուրին, որ բխում էր լեռան (գագաթից, ստորոտից): Նա խմեց աղբյուրի (տաք, սառնորակ) ջրից ու նորից վազեց անտառ:

Խաչբառ



Պատվական Խաչատրյան

Իմ հերոս պապը

Մի նկար է ժպտում պատից՝
Այնպե՜ս ջահել, այնպե՜ս սիրուն,
Բայց արի տե՛ս՝ ապրել է նա
Ընդամենը քսան գարուն:

Նա իմ պապն է եղել բարի,
Ափսո՜ս, նրան ես չեմ տեսել.
Տատս է միայն, արցունքն աչքին,
Նրա մասին հեքիաթ ասել:

Ընկել է նա որպես հերոս՝
Պաշտպանելիս հողն հայրենի.
Ա՜խ, չլիներ պատերազմը՝
Ես էլ պապիկ կունենայի:

ընդամենը
ընդհանուր

Հարցեր և առաջադրանքներ

1. *Ո՞ւմ նկարն է պատից կախված, և ինչո՞ւ է նա ապրել ընդամենը քսան գարի:*
2. *Թոռնիկն ինչի՞ համար է ափսոսում:*
3. *Ի՞նչ միտք է արտահայտված վերջին քառատողի մեջ:*
Դասարանում կարդացեք ***«Կորչի՛ կռիվը»*** *պատմությունը:*

Ասացվածք

Պատերազմը չարիք է:

Ցարդունակի՛ր.



Պապիկի խրատներից

Հայրենիքիդ համար մի՛ խնայիր ո՛չ ուժդ, ո՛չ կյանքդ:

Հիշո՞ւմ ես, որ...

Բառասկզբում о լսելիս գրում ենք о:
Բառամիջում և բառավերջում о լսելիս գրում ենք n:

оծառ, оգնել, оր, Оշական.

hոդ, հերոս, երեկո, զինվոր:

Գրի՛ր բառասկզբի о և բառամիջի (n) ունեցող 5-ական բառ:

Երկուական բառ գործածի՛ր նախադասությունների մեջ:

Ըստ Զարուհի Գալեմքարյանի

Մեծ մայրիկի նամակը

Հալեպ
7 սեպտեմբերի, 2009թ.

Հանուշի՛կ թոռնիկս,

Երեկ սրտաց նամակդ: Որքա՜ն քաղցր խոսքեր էիր ուղարկել, և որքա՜ն կարոտ կար նամակիդ մեջ:

Իմեն օր լուսանկարիդ առջև խոսում եմ քեզ հետ և օրհնում եմ քեզ ու մայրիկիդ: Իմեն վայրկյան ինչ հետ ես, անուշի՛կս: Ինչ օրվանից, որ բաժանվեցի քեզա-

ևից, ավելի շատ եմ սիրում փո փարիզի փողաներին:

Ի՞նչ եղավ Սիգրանը: Հիշում եմ՝ հայրը անգործ էր մնացել: Մի օր խնդրեցիր, որ ճերմակ շապիկներիդ մեկը Սիգրանին փոխ տանի[1], որովհետև այդ օրը մարմնամարզության դաս ուներ, իսկ մայրը ժամանակ չէր ունեցել լվանալու փոքրի շապիկը:

– Մե՛ջ մայրիկ, – ասացիր,– մաքուր փոքա է, չի կեղտոտի. միայն մեկ ժամ պիտի հագնի ու վերադարձնի:

– Լավ չի՞ լինի, որ այս շապիկը Սիգրանին տանի. դու ուրիշ երկու հատ էլ ունես,– ասացի ես:

Ուրախությունից յարկոտեցիր և ինչ փաթաթվեցիր երգանկությամբ:

– Ինո՜ւշ սիրտ,– ասացիր ինչ,– որքա՜ն եմ սիրում քեզ:

Մեջացի՛ր, սիրելի՛ս, մեջացի՛ր այդ բարի ու անուշ կգացումներով:

Քաղցր համբույրներով՝ մեջ մայրիկդ

[1]**փոխ տալ** – այստեղ՝ ժամանակավորապես օգտագործելու տալ

կգալ
կգացում

Հարցեր և առաջադրանքներ

1. *Կարդա՛ այն տողերը, որոնցում արտահայտված է մեծ մայրիկի անսահման սերը թոռնիկի հանդեպ:*
2. *Մեծ մայրիկի նամակի համաձայն՝ փորձի՛ր թվել թոռնիկի բարեմասնությունները:*
3. *Դու ինչպե՞ս կարտահայտեիր քո սերն ու հարգանքը մեծ մայրիկիդ հանդեպ. մի անուշիկ նամակ գրիր նրան:*

Իսկ դու կարո՞ղ ես քո մասին ասել.

	այո՛	ո՛չ
Ես հեգնում եմ իմ տատիկի ու պապիկի խրատներին:	☐	☐
Ես հոգատար եմ տատիկիս ու պապիկիս հանդեպ:	☐	☐

Կարդա՛ ոտանավորը և ասա՛, թե բառերի սկզբում ինչո՛ւ է **ո** գրված.

Ոսկանն եմ ես, Ոսկանը,
Ոտով հասա որսասար,
Որսասարում որս արի՝
Որսկան պապիս հավասար:

Գ. Գաբրիելյան

Հիշո՞ւմ ես, որ...

***Բառասկզբում *վo* լսելիս գրում ենք* ո:**

Տրված բառերը գրի՛ր առանձին սյունակներով՝ օրինակի պես.

որդի, Ոսկան, Ոսկեհատ, որդ, ոլոռ, ոստիկան, ոսկեգույն, Ոսկեվազ, ոստայն, Որոտան, Ոստանիկ:

Օրինակ՝

ո	*Ո*

Պարվական Խաչատրյան

Ծիծեռնակն ու ծիտիկը

Դրսում արդեն աշուն է խոր,
Մերկացել են անտառ ու ձոր:
Քամին անվերջ փչում, գալիս,
Ձմռան ճամփին ծափ է տալիս...
–Վա՜յ, ճի՛կ, ճի՛կ, ճի՛կ, չվեմ գնամ,
Այս ի՞նչ ցուրտ է, ո՞նց դիմանամ,–
Ասաց, թռավ մի ծիծեռնակ՝
Թողած բույնը, տանիք ու բակ:
Բայց անտառում հանկարծակի
Հանդիպեց նա մի ծիտիկի.
–Վա՜յ, ճի՛կ, ճի՛կ, ճի՛կ, անո՛ւշ քույրիկ,
Ո՛չ շոր ունես, ո՛չ ուտելիք.
Արի գնա՛նք, տաք է հեռվում,
Կսառչես դու այս անտառում...
Ծիտիկն ասաց.
–Ծի՛վ, ծի՛վ, ծի՛վ, ծի՛վ,
Քույրեր ունեմ այստեղ անթիվ,
Ես նրանցից հո ավե՞լ չեմ
Կամ անտառից ինչո՞ւ փախչեմ:

Այս է տունը իմ հայրենի,
Այս է բույնը իմ մայրենի:
Այստեղ եմ ես թևեր առել,
Այս ծառին եմ եկել թառել.
Թեկուզ սառած ընկնեմ ծառից,
Չեմ հեռանա այս անտառից:

Հարցեր և առաջադրանքներ

սառչել
փաթչել

1. *Ծիծեռնակը ինչո՞ւ էր ուզում չվել:*
2. *Նա ի՞նչ առաջարկեց ծիտիկին. ինչո՞ւ:*
3. *Ծիտիկը ինչո՞ւ չուզեց հեռանալ անտառից:*
4. *Հավանեցի՞ր ծիտիկի պատասխանը. ինչո՞ւ:*
5. *Այս ոտանավորը կարդացե՛ք դերերով (**հեղինակ, ծիծեռնակ, ծիտիկ**):*

Հանելուկներ

Երկու սիրուն աչիկ ունի,
Մկրատաձև պոչիկ ունի,
Կուրծքն սպիտակ՝ կաթի նման,
Թևերը սև՝ սաթի նման:



Մի թռչուն կա շուտ չվող,
Արևոտ գարուն բերող.
Թռչելիս է որս անում,
Մարդկանց մոտ է բույն շինում:

Թռչունների հանած ձայները

Ճնճղուկը ճռվողում է:
Սոխակը դայլայլում է:
Հավը կչկչում է:
Աղռավը կռկռում է:
Արագիլը կափկափում է:
Ծիտը ծլվլում է:

Ոտանավորի միջից գտի՛ր հետևյալ բառերի հակառակ իմաստն ունեցող բառերը և գրի՛ր դեմ դիմաց.

ներս, գնալ, ամառ, ցուրտ, մոտ, տգեղ, մոտենալ, սև, ուշ, տաք:

Դրանցից երկու զույգը գործածի՛ր նախադասությունների մեջ:

Արշավիր Դարբնի

Երկու ծաղիկ

Երկու ծաղիկ՝
Մեկը՝ սարից,
Մեկն՝ անտառից,
Ծաղկամանում
Խոսում էին ու կարոտում՝
Մեկը՝ սարին,
Մեկն՝ անտառին:
–Ես իմ սարի հովն եմ սիրում...
–Ես անտառի զովն եմ սիրում...
–Կարոտել եմ սարալանջին,
Աղբյուրների երգ-կարկաչին...
–Կարոտել եմ թավ անտառին,
Ամեն թփին, ամեն ծառին...
–Արի գնա՜նք, արի գնա՜նք՝
Ես՝ իմ ծաղկած սիրուն սարը,
Դու՝ քո սիրած թավ անտառը...
–Թևեր չունենք, ինչպե՞ս գնանք:
–Փույթ չէ, եթե ճամփին մնանք:
–Գնա՜նք, գնա՜նք...
Երկու ծաղիկ՝
Նուրբ ու քնքուշ,
Ծաղկամանից ելան զգույշ
Ու գնացին՝
Մեկը՝ դեպի ծաղկած սարը,
Մեկը՝ դեպի թավ անտառը...

[1]**թավ** - խիտ
[2]**փույթ չէ** - հոգ չէ, պետք չէ անհանգստանալ

Ծաղիկ
Ծաղկել
Ծաղկամ՛ան

Հարցեր և առաջադրանքներ

1. *Ի՞նչ ծաղիկներ են պատկերված նկարում. դրանցից ո՞րն է անտառում աճում, ո՞րը՝ դաշտում:*
2. *Երկու ծաղիկներից յուրաքանչյուրը ինչի՞ն էր կարոտում. կարդա՛ այդ տողերը:*
3. *Ծաղիկները ի՞նչ որոշեցին. ինչո՞ւ:*
4. *Դու ի՞նչ կզգայիր և ինչպե՞ս կվարվեիր, եթե քո ծնողներից և ձեր տնից հեռու լինեիր:*
5. *Այս ոտանավորը արտասանեցե՛ք դերերով:*

Կազմի՛ր բառակապակցություններ և կարդա՛.

նուրբ	ձոր
թավ	ծաղիկ
քնքուշ	դաշտ
խոր	սար
բարձրիկ	անտառ
ծաղկած	

Հանելուկներ

Դաշտի զարդն է,
Գույնը՝ ալ,
Ամեն այտին՝
Մի սև խալ:

Ջանգակներ են
Կլորիկ,
Եվ բույր ունեն
Անուշիկ:

Խաչբառ

							Վ	
			Մ					Կ
							Դ	
	Ն							
Շ					Ն			
			Կ					
	Ր							

Կարդա՛ այս բառերը և ուշադրությո՛ւն դարձրու բառասկզբում ը-ի արտասանությանն ու գրությանը.

ընկեր, ընտանիք, ըմպել, ըմբռնել.

սկիզբ, զբոսնել, զգույշ, սպասել:

Ուշադրությո՛ւն.

Գիտե՞ս, որ...

Բառասկզբում ը-ն գրվում է ն և մ բաղաձայններից առաջ:

ըստ

1.	Տրված բառակապակցությունները գործածի՛ր նախադասությունների մեջ.
	փափուկ սպունգ, հաճելի զբոսանք, զգաստ կանգնել, հեքիաթի սկիզբ, զգույշ մոտենալ:
2.	Տրված բառերը գրի՛ր առանձին սյուներով՝ ըստ օրինակի.
	ընկույզ, սկսել, զբոսնել, ընկնել, ըմպանակ, ըմբռնել, սպիտակ, շտապել, ընտրել, ստուգել, զգալ, ընդունել: Օրինակ՝ *ընտրել* | *զգալ*
3.	Տրված անունների և ազգանունների մեջ գտի՛ր ուրիշ անուններ և գրի՛ր ճիշտ ուղղագրությամբ.
	Իշխանուհի, Հրանուշ, Հայարփի, Պերճուհի, Վարդանյան, Գևորգյան, Արծրունի, Սիրվարդ, Արամայիս, Կարապետյան, Տեր-Գաբրիելյան, Տեր-Գրիգորյան: Օրինակ՝ Տեր-Գաբրիելյան – Գաբրիել:

Թեմայի ամփոփում

Հովհաննես Շիրազ

Քամին ու մանուշակը

Քամին ասաց մանուշակին.
-Արի տանեմ քեզ այստեղից,
Տանեմ ծովեր՝ ջինջ, լուսեղեն:
Ծաղիկն ասաց.- Ես կմեռնեմ,
Եթե կտրես ինձ մայր հողեն:

Չհավատաց կարծես քամին,
Կտրեց տարավ ծաղիկն անգին,
Բայց նույն պահին իր ձեռքի մեջ
Մեռած տեսավ մանուշակին:

1. *Պատմի՛ր Հովհաննես Շիրազի «**Քամին ու մանուշակը**» բանաստեղծության բովանդակությունը:*

2. *Մանուշակը ինչու՞ թառամեց.մայր հողը ի՞նչ էր նրա համար:*

3. *Այս խմբի դասերից հայրենի դրան մասին ի՞նչ սովորեցիր. ի՞նչ է դրունը մեզ համար:*

4. *Ինչու՞ են ընտանիքի բոլոր անդամները թանկ ու սիրելի . հիշի՛ր «**Բոլորից շատ բոլորին եմ սիրում**» պատմությունը:*

5. *Ընտանիքի մասին դասերից ո՞րն ավելի շատ սիրեցիր. ինչո՞ւ: Համառոտ պատմի՛ր դրա բովանդակությունը:*

6. *Գրի՛ր մի փոքրիկ պատմություն՝* ***«Երբ որ պանն են բոլորը»*** *վերնագրով՝ օգտվելով տրված նկարից, հարցերից և բառակապակցություններից (կարող ես գրել քո ընտանիքի մասին).*

աշնանային տաք օր, գույնզգույն տերևներ, անուշ դայլայլ, դաշտային ծաղիկներ, գեղեցիկ ծաղկեփունջ, հանգիստ քնել, ճաշի սեղան, անուշիկ տատիկ, սիրելի պապիկ, հոգատար թոռնիկներ, համերաշխ ընտանիք...

Հարցեր

1. *Տարվա ո՞ր եղանակն է. նկարագրի՛ր:*
2. *Քանի՞ հոգուց է բաղկացած ընտանիքը:*
3. *Ինչո՞վ են զբաղված ընտանիքի անդամները:*
4. *Ուրիշ ի՞նչ ես տեսնում նկարի մեջ:*
5. *Ինչպիսի՞ ընտանիք է:*

ՈՍԿԻ ԱԾՈՒՆ



Աշուն է իջել հայոց լեռներին,
Շքեղ մասրենին այնպե՛ս է բուրում,
Որ Մասիսներից ճերմակ ձյունների
Բուրմունքն է բերում...

Ռավմիկ Տոնյան

Աշուն

Մեր սարերով եկար,
Այգիներով նախշուն,
Մեր խնդությո՜ւն անմար,
Մեր սիրելի՜ աշուն:

Տերևները գույն-գույն
Թիթեռնիկներ դարձան,
Ու երկնքով կապույտ
Կռունկները անցան:

Շուրջը իջավ մշուշ,
Ճամփին քամին պարեց,
Ու դաշտերին փոշոտ
Բարակ անձրև մաղեց...

նախշ
նախշել
նախշուն

Հարցեր և առաջադրանքներ

1. *Նկարագրի՛ր աշնանային բնությունը՝ ըստ ուրանավորի:*
2. *Բանաստեղծը ինչերի՞ է նմանեցնում աշնանային տերևները. ինչո՞ւ:*
3. *Վերհիշեցե՛ք «**Աշուն**» երգը և երգեցե՛ք դասարանում:*

Կազմիր ճի՛շտ բառակապակցություններ.

գույն-գույն	անձրև
կապույտ	այգի
նախշուն	ճամփա
փոշոտ	երկինք
անձրևոտ	տերև
բարակ	օր

Հանելուկ

Իր բարձրիկ տեղից
Աշնանն է միայն
Իջնում նա հողին,
Երբ նրա կանաչ
Ժպիտն է դառնում
Տխուր ու դեղին:

Գրի՛ր 5 բառ, որոնց սկզբում ը-ն լսվում և գրվում է, և 5 բառ, որոնց սկզբում ը-ն լսվում, բայց չի գրվում:

Օրինակ՝ *ընկույզ* | *սպիտակ*

Լիպարիտ Սարգսյան

Աշնան այգին

Այգին, աշնա՜ն այգին՝
Տաք գույներով, բույրով,
Գիրկն է կանչում կրկին
Հազար հրապույրով[1]:

Կա՛թ-կա՛թ՝ տանձն է կաթում՝
Շեկ այտերին ցողիկ,
Ընկույզներն են՝ տո՛ւկ-տո՛ւկ,
Ընկնում խոնավ հողին:

Փշատն է ծիկ անում,
Ալրոտ են աչք և ունք,
Շաղն է նստել դեղձի
Դեմքին՝ հուլո՜ւնք, հուլո՜ւնք:

Տերևների քողով
Նուռն է դեմքը փակում
Ու կանչում է.– Քաղվո՛ր,
Հասի՛ր, սիրտս է ճաքում:

Իսկ այգեպան քեռին
Քայլում է գոհ և լուռ.
Խնդություն[2] է համակ[3]
Նրա սիրտը մի բուռ:

[1] **հրապույր** - գրավիչ՝ գեղեցիկ լինելը
[2] **խնդություն** – ուրախություն
[3] **համակ** - ամբողջովին

Հարցեր և առաջադրանքներ

1. *Բանաստեղծը ի՞նչ պատկերներով է նկարագրում հասած մրգերը:*
2. *Ինչո՞ւ է այգեպանը գոհ և ուրախ. ինչի՞ շնորհիվ է այգին այդքան բերքառատ:*

Ըստ բանաստեղծության՝ նկարի՛ր մրգի քո հավանած պատկերը:

Հանելուկներ

Փայտիկը պաշած է,
Ալյուրը մաղած է.
Կարմիր շապիկն էլ
Ձեռքով կարած է:

Կլոր բույն է,
Չունի դուռ,
Մեջը հուլունք
Կա մի բուռ:

Կլորիկ չեմ խնձորի պես,
Կաթող մեղրի ձև ունեմ ես.
Պտուղ եմ ես՝ համեղ, անուշ.
Ասա՛ անունս, Միրանո՛ւշ:



Ասա՛ ծառի անունը.

դեղձ
փանձ
փշատ

– ենի

մասուր
նուռ
ընկույզ
նուշ
թութ

խաղող - *որթատունկ*
ձիթապտուղ - *ձիթենի*

Տրված երկու շարք բառերի միջից գտի՛ր իմաստով մոտ բառերը և գրի՛ր՝ օրինակի պես.

- *տաք, բույր, կրկին, շեկ, համակ, ցող, խոնավ, խնդություն, փակել, փոքրիկ, նախշուն, ժրաջան, մշուշ.*
- *գույն-գույն, ուրախություն, աշխատասեր, մառախուղ, շոգ, նորից, կարմիր, հոտ, ամբողջովին, շաղ, ծածկել, թաց, պստլիկ:*

Օրինակ՝ *մշուշ – մառախուղ:*

Ըստ Էմիլյա Օհանյանի

Աշուն

1

– Աշո՜ւն է, աշո՜ւն, – երգում է բնությունը:

Աշնան երեք ամիսները՝ սեպտեմբերը, հոկտեմբերը, նոյեմբերը, հերթով հաջորդում են միմյանց:

– Ինձանով է սկսվում աշունը. իմ առաջին օրը՝ սեպտեմբերի մեկին, բոլոր դպրոցականները շտապում են դպրոց, – հպարտանում է սեպտեմբերը:

Սեպտեմբերին այգիներն ու դաշտերը լցվում են բերք ու բարիքով և ժպիտով հրավիրում մարդկանց՝ վայելելու դրանք:

Չվող թռչունները հրաժեշտ են տալիս իրենց հարազատ վայրերին. չէ՞ որ աշնանը միջատներն ու որդերը թաքնվում են, և պակասում է թռչունների կերը:

Սեպտեմբերին օրերը կամաց-կամաց ցրտում են, ցերեկները՝ կարճանում, գիշերները՝ երկարում:

Անցնում է սեպտեմբերը սարերով ու դաշտերով և իր վրձինով գույնզգույն ներկում ամեն ինչ:

2

– Հապա ե՞ս, ես պակա՞ս եմ նախշում դաշտ ու անտառ, թուփ ու ծառ, – նեղացած ասում է հոկտեմբերը:

Փոքրի՛կ, փորձի՛ր հոկտեմբեր ամսին անտառ մտնել, քայլել դեղին, կարմիր, շագանակագույն տերևների վրայով. չէ՞ որ տերևաթափն արդեն սկսվել է: Ինչպե՜ս են խշշում դրանք, ի՜նչ անուշ մեղեդի՛ է...

Հոկտեմբեր ամսին այգիներում ու դաշտերում շատ գործ կա անելու, և մարդիկ ժրաջան աշխատում են:

Կենդանիներն էլ պատրաստվում են ձմռանը: Ահա ոզնին, փշոտ մեջքին չոր տերևներ հավաքած, շտապում է տուն՝ փռելու հատակին, որ ձագուկները չմրսեն: Արջերը և սկյուռիկները ձմռան պաշար են հավաքում, որպեսզի քուն մտնեն:

– Թռչուններ ու կենդանիներ էլ կան, որոնք չեն պատրաստվում ձմռանը, ինչպես, օրինակ, ճնճղուկները, նապաստակները,– մեջ է մտնում նոյեմբերը:– Նապաստակն ամբողջ օրը այս ու այն կողմ է վազում՝ կեր ճարելու, բայց ամեն վայրկյան ի՛նքը կարող է կեր դառնալ գիշատիչ գազանների համար: Սակայն շուտով նա կհագնի իր ձմեռային սպիտակ մորթին, որպեսզի ձյան վրա ոչ ոք նրան չնկատի:

Արդեն փչում է սառը քամին, մաղում է մանր անձրևը:

– Շուտով ես էլ կգնամ ու ինձ հետ կտանեմ աշունը. չէ՞ որ ես աշնան վերջին ամիսն եմ,– տխուր ասում է նոյեմբերը:

[1]**մեղեդի** - երաժշտական հաճելի եղանակ

թռչուն
թռչել
թռիչք

Հարցեր և առաջադրանքներ

1. *Ինչո՞ւ էր հպարտանում սեպտեմբերը:*
2. *Թռչուններն ու կենդանիները ինչպե՞ս են պատրաստվում ձմռանը:*
3. *Որո՞նք են աշնան ամիսները. բնության մեջ ի՞նչ փոփոխություններ են կատարվում այդ ամիսներին:*

Դասարանում կարդացե՛ք ***«Երգ աշնան մասին»*** *բանաստեղծությունը:*

Լրացրո՛ւ բառակապակցությունները մոտ իմաստ ունեցող բառերով.

կայտառ ◦ երեխա

ջանասեր ◦ մեղու

գեղեցիկ ◦ մեղեդի

վախկոտ ◦ ճագար

Օրինակ՝

քաջ ◦ զինվոր

արի ◦ զինվոր

քաղցր ◦ պտուղ

քաղցր ◦ միրգ

Բառակապակցություններից չորսը գործածի՛ր նախադասությունների մեջ:

Հանելուկներ

Նա բնության հեր
Փոխում է գույնը.
Կդառնա ձերմակ,
Երբ մաղի ձյունը:

Ծառերի փչակի մեջ
Ես իմ պալատն եմ շինում
Եվ ծառերի կատարին
Ընկույզ, կաղին եմ ուտում:

Կաթնասուն է, խոտ է ուտում,
Իր փշերով օձ է սպանում:

Ճանաչի՛ր և ցի՛ր միայրու.

պապյան
փշեր
կնճիթ
սապայտ
կատար
եղջյուր



Նանսեն Միքայելյան

Աշնան նկար

Դեղին մատիտ առա,
Նկարեցի աշուն՝
Տերևներով առատ,
Տերևներով նախշուն:

Կարմիր մատիտ առա,
Նկարեցի աշուն՝
Խնձորներով առատ
Ու դեղձերով նախշուն:

Կանաչ մատիտ առա,
Նկարեցի ծիլեր
Ու ծիլերի վրա՝
Ամպի ճերմակ թելեր:

Առա կապույտ մատիտ
Եվ իմ աշնան վրա
Նկարեցի չվող
Կռունկների երամ:

Ու հետո սև գույնով
Նկարեցի երկիր.
Ափսո՜ս, որ չունեի
Ուրիշ գույնի ներկեր...

Հազար գույնի մատիտ
Ինչպե՜ս ես ճարեի,
Որ պատկերը աշնան
Լրիվ նկարեի:

դեղջ Վրժիկ

Հարցեր և առաջադրանքներ

1. *Փոքրիկ տղան ի՞նչ գույնի մատիտներով աշուն նկարեց. ո՞ր գույնով ի՞նչ նկարեց:*
2. *Նա ինչո՞ւ չշարունակեց նկարել:*
3. *Դասից գտի՛ր բառակապակցություններ և դրանցից 5-ը գործածի՛ր նախադասությունների մեջ:*

ա) Ի՞նչ գույներ կտրանաս, երբ իրար խառնես՝ ***դեղին*** *և* ***կապույտ****,* ***կարմիր*** *և* ***սպիտակ****,* ***կարմիր*** *և* ***դեղին****,* ***սև*** *և* ***սպիտակ****,* ***կապույտ*** *և* ***կարմիր*** *գույները:*

բ) Դո՛ւ էլ փորձիր նկարել աշնանային գողտրիկ մի տեսարան. կարող ես օգտվել աշնան մասին դասերի նկարագրություններից:

Հանելուկ

Վրձին չունի, ներկեր չունի,
Դաշտն է ներկում հազար գույնի:

Ցուցասելուկ

Վարա՛գ, գնա՛ մարագ, արի՛,
Արա՛գ գնա մարագ, արի՛:
Թե մարագում կարագ գտար,
Կարագը ա՛ռ, արա՛գ արի:

Արտագրի՛ր նախադասությունները՝ ճիշտ բառը տեղադրելով.

...ականջներով շունը ...էր: (*կաղ*, *կախ*)

...դեմքով պոչ թզուկը ...կապույտ աչքեր ունի: (*խոժոռ*, *խոշոր*)

...կրուպով արջիվը ... է փնտրում թռչելիս: (*կեռ*, *կեր*)

Մեղուների ... հեռվից ... երևում էր: (*պարզ*, *պարս*[1])

Շունը հաչեց[a] *..., ..., ..., մոտիկ եկավ մի չալ ...:* (*հավ*, *հա՛ֆ*)

[1]**պարս-** մեղուների խումբ

Հովհաննես Թումանյան

Տերևաթափ

– Ա՛յ փոքրիկներ, ա՛յ սիրուններ,–
Ասավ քամին տերևներին,–
Աշուն եկավ, մոտ է ձմեռ,
Ի՞նչ եք դողում ծառի ծերին:
Ոսկի, դեղին, վառ ծիրանի
Գույնե՛ր հագեք խայտաբղետ
Ու ճյուղերից ձեր մայրենի
Եկե՞ք ինձ հետ, փախե՞ք ինձ հետ...
Տերևները հենց լսեցին,
Նախշուն-նախշուն գույներ հագան,
Սվսվալով տխուր երգեր՝
Քամու թևին թռան, փախան:

տերև
տերևաբեր
տերևաթափ

Հարցեր և առաջադրանքներ

1. *Քամին ի՞նչ էր առաջարկում տերևներին. ինչո՞ւ:*
2. *Տերևները ինչո՞ւ տխուր երգերով հեռացան:*
3. *Անգի՛ր սովորիր այս գեղեցիկ բանաստեղծությունը:*

Դասարանում կարդացե՛ք ***«Ինչ են շշնջում»*** *բանաստեղծությունը. ի՞նչ եք կարծում, ի՞նչ են սվսվում ու շշնջում տերևները:*

Բնության ձայները

Ամպը { որոտում է:

Տերևները { սոսափում են:
սվսվում են:
խշխշում են:

Ջուրը { գլգլում է:
կարկաչում է:
քչքչում է:

Քամին { սուլում է:

Հանելուկներ

Ճյուղից կախված
Պար կգամ,
Աշնան քամուց
Վար կգամ:

Մերթ խենթուկ է նա,
Մերթ մեղմ ու բարի,
Հով կանի նա քեզ՝
Առանց հովհարի:

Կարդա՛ և ուշադրությո՛ւն դարձրու ղ բաղաձայնի գրությանն ու արտասանությանը.

դեղին, դողալ, ճյուղ, կաղին.

թուղթ, ուղտ, հաղթել, քաղցր, շղթա, եղ-բայր, աղջիկ, աղբյուր, դեղձ, գաղտնի:

Տրված բառերը արտագրի՛ր երկու սյունակով՝ ըստ օրինակի.

հաղթանակ, փեղկ, շող, ճյուղ, կեղտոտ, կաղնի, դեղնել, աղքատ, գաղտնիք, շղթա, կողով, աղավնի:

Օրինակ՝

ղ-ղ	խ-ղ
կաղնի	*շղթա*

Լիդա Միլևա

Պարահանդես անտառում

Աշունը մտավ կեչիների անտառը ու ներկեց տերևները բոլոր: Նրանք դեղին, կարմիր ու վառ ծիրանի զգեստներ հագան:

Հետո հովերը, որոնք ամառը քուն էին մտել, զարթնեցին: Վերցրին սրինգներն ու նվագեցին: Տերևներն ուրախությունից ծափ զարկեցին և պարեցի՜ն ու պարեցի՜ն...

Սրինգների նվագն աշխույժ էր ու զրնգուն: Կեչու տերևները ճյուղերին ամրացած էին նուրբ ու բարակ կոթերով: Այդ պատճառով հեշտությամբ պոկվեցին և հովերի հետ թռչկոտեցին:

– Մենք հիմա ի՞նչ անենք, – հարցրին կեչու տերևները:

– Դո՜ւ, դո՜ւ, դո՜ւ, դո՜ւ,– պատասխանեցին հովերն իրենց սրինգներով, – ի՞նչ է, չհասկացա՞ք. այսօր մեծ պարահանդես է լինելու: Տեսե՜ք, ուռիներն արդեն ոսկեզօծել[1] են իրենց մազերը: Այն ջահել կաղնին հագել է կարմիր զգեստները: Նույնիսկ մասրենին հասցրել է զարդարվել: Գնա՜նք, պարահանդես է, գնա՜նք:

Այսպես էին նվագում հովերը... Իսկ կեչու վառ տերևները պտտվո՜ւմ էին, պտտվո՜ւմ, պարո՜ւմ էին ու թռչկոտո՜ւմ...

Ո՞վ կարող էր նրանց կանգնեցնել. չէ՞ որ պարահանդես էր:

[1]**ոսկեզօծել** – այստեղ՝ ոսկեգույն դարձնել, դեղին գույնով զարդարել

արթուն
արթնանալ
կարթնել

Հարցեր և առաջադրանքներ

1. *Նկարագրի՛ր անտառի պարահանդեսը. ո՞ր ծառերն էին մասնակցում պարահանդեսին և ի՞նչ գույնի զգեստներով:*
2. *Ինչե՞րն էին ղեկավարում պարահանդեսը. երաժշտական ի՞նչ գործիք էին նվագում նրանք:*

Փորձի՛ր նկարով պատկերել անտառի հեքիաթային պարահանդեսը:

Ոչ պտղատու ծառեր

եղևնի

ուռենի

սոճի

կեչի

բարդի

Կարդա՛ և ուշադրությո՛ւն դարձրու գ բաղաձայնի գրությանն ու արտասանությանը տրված երկու շարք բառերում.

զգեստ, սրինգ, նվագել, գորգ.

երգ, օգտակար, հագնել, միրգ, կարագ, օգնել, ուրագ, ծագել:

Ուշադիր կարդա՛ հետևյալ բառերը. նախադասության մեջ գործածի՛ր միայն նրանք, որոնց մեջ լսվում է ք, գրվում է գ.

երգել, գիրք, օգնություն, ագռավ, հագուստ, գազար, միրգ, թագ, գույնզգույն, օգնական, գրկել, օգուտ:

Վախթանգ Անանյան

Վայրի տանձենու տակ

Աննման է Կապանի աշունը: Խուստուփի լանջերը տեղ-տեղ ծածկված են ընկույզի անտառներով: Առատ են այնտեղ տանձը, խնձորը, սալորը: Քայլում ես նոր թափված գույնզգույն տերևների միջով, և աչքդ շոյում են ծառերի վրայից քեզ ժպտացող ալ ու ալվան մրգերը:

Անտառի ողջ բնակչությունը՝ սկյուռ, մուկ, արջ ու եղնիկ, ոզնի ու աղվես, ո՛րը ուտում է տեղնուտեղը, ո՛րը շտապ-շտապ հավաքում է մրգերն ու կրում իր բույնը: Բոլորն էլ ձմռան պատրաստություն են տեսնում. ով քուն է մտնելու, ճարպ է հավաքում, ով չի քնելու, կեր է ամբարում[1]: Խոզը շատ զգույշ է. եթե սոված էլ լինի, օրը ցերեկով դուրս կգա՞ իր թաքստոցից: Ուրիշ է արջը. մրգի տեսքից նա խելքը կորցնում է, ամեն զգուշություն մոռանում:

Ահա անտառի խորքում մի ծառ է շարժվում, և լսվում է թափվող մրգի կտկտոցը. արջն է, որ մարդու նման երկու ձեռքով

բռնել, թափ է տալիս ճյուղերը: Իսկ ներքևում՝ թափվող տանձի կարկուտի տակ, երկու քոթոթ գզվռտվում են իրար հետ:

Այնքա՜ն դուրեկան է ծիրանի հագած այս տաքուկ անտառում, այնքա՜ն հաճելի են օդում պարելով իջնող այս նախշուն տերևները, որ ուզում ես խաղալ, տրտինգ տալ[2], չարաճճիություններ անել: Եվ ահա քոթոթները իրար գրկում են, պաչպչում, իրար երես լիզում, թաթերով քնքուշ ու սիրալիր ապտակներ տալիս և գլորվում տերևների վրայով...

[1]**ամբարել** – պաշար հավաքել
[2]**տրտինգ տալ** – ցատկոտել

Հարցեր և առաջադրանքներ

1. *Նկարագրի՛ր Կապանի աշնանային մրգառատ անտառները:*
2. *Որո՞նք են անտառի բնակիչները. նրանք ինչպե՞ս են պատրաստվում ձմռանը:*
3. *Պատմի՛ր՝ արջն ինչպե՞ս է տանձ հավաքում, և նկարագրի՛ր քոթոթների ուրախությունը:*

Ցուցասելուկ

Մեր ծառը բարձրիկ է,
Անունը Բարձրիկ է,
Իր տված տանձիկը
Հյութեղ ու քաղցրիկ է:



Կազմի՛ր ճիշտ զույգեր և դրանք գործածի՛ր մտքով իրար հետ կապված նախադասությունների մեջ.

գույնզգույն	*տերևներ*
նախշուն	*ծաղիկներ*
խայտաբղետ	*մրգեր*
ալ ու ալվան	*թիթեռներ*
երփներանգ	*թերթիկներ*
գույն-գույն	*դաշտեր*

Կենդանին և ձագը

արջ - քոթոթ
առյուծ - կորյուն
ձի - մտրուկ
շուն - լակոտ
կով - հորթ
այծ - ուլ
խոզ - խոճկոր
ոչխար - գառ
էշ - քուռակ

Կարդա՛ և ուշադրությո՛ւն դարձրու հետևյալ անունների գրությանն ու արտասանությանը.

Գոռ, Անգինե, Գագիկ, Գարեգին.

Սարգիս, Թագուհի, Գևորգ, Գրիգոր:

1.	Դասի վերջին պարբերությունից գտի՛ր գ բաղաձայնի ուղղագրությանը վերաբերող բառերը (5 բառ) և դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:
2.	Արտագրի՛ր՝ կետերի փոխարեն գրելով գ կամ ք.

Աշուն տատիկը

.իշեր ու ցերեկ
Ծերեփը ձեռքին՝
Հյութ է բաժանում
Բեր. ու բարի.ին:

Բաժանում է նա
.ույներ արևոտ
Ու .ույների հետ՝
Անուշ համ ու հոտ:

Հետո .ույնզ .ույն
.ո.նոցը կապած՝
Ինչ ունի-չունի,
Տալիս է մարդկանց:



Պ. Խաչատրյան

Աշնանային պտուղներ

Խաչբառ



1. *փոքրիկ պտուղ՝ կարմիր կեղևով և ալյուրի նման միջուկով.*

2. *կաթիլի ձև ունեցող անուշահամ պտուղ՝ դեղին, կանաչ, կարմրաթուշ.*

3. *կլոր տնակ՝ մեջը լիքը կարմիր հատիկներ.*

4. *ոսկեգույն անուշաբույր պտուղ՝ կեղևին՝ թավշանման շապիկ.*

5. *հյութալի պտուղ՝ թավշե կեղևով ու կարմիր այտերով.*

6. *կլորիկ պտուղ՝ փայլուն այտերով.*

7. *ողկույզի ձև ունեցող պտուղ՝ ոսկեգույն կամ կանաչ, սև կամ կարմիր քաղցր հատիկներով.*

8. *կծուծիկի նման փոքրիկ կարմիր պտուղ՝ մեջը լիքը փշիկներ.*

9. *մանուշակագույն կամ կանաչ քաղցրահամ պտուղ՝ մեջը մանրիկ կորիզներ:*

Թեմայի ամփոփում

Համո Սահյան

Աշուն

Աշնան օրերն են հասել,
Իջել է ամպը սարին,
Եվ հրաժեշտ է ասել
Կռունկը մեր աշխարհին:

Բարդին է՛լ չի սոսափում
Արագիլի թևի տակ,
Դեղին թերթերն է թափում
Առվակի մեջ կապուտակ:

1. *Պատմի՛ր Համո Սահյանի «**Աշուն**» բանաստեղծության բովանդակությունը՝ օգտվելով հեղինակի պատկերներից:*

2. *Նկարի՛ր աշնանային այդ պատկերը:*

3. *Քո իմացած բանաստեղծություններից արտասանի՛ր հատվածներ՝ նվիրված՝*

ա) գույնզգույն տերևներին ու տերևաթափին,

բ) աշնանային բերքառատ այգիներին,

գ) աշնանային գույներին:

4. *Աշնանային գույնզգույն տերևներով պատրաստի՛ր որևէ կենդանու նկար կամ բնապատկեր:*

Խաղ – առաջադրանք

Աշխատեցե՛ք խմբերով.

Բնութագրեցե՛ք ***վաղ աշունը*** *և* ***խոր աշունը՝*** *օգտագործելով տրված բառերի կամ բառակապակցությունների փնջերից (1, 2 կամ 3).*

1. *հակառակ իմաստ ունեցող բառազույգեր.*

ուրախ – տխուր
պայծառ – մռայլ
տաք – ցուրտ
լուսավոր – մութ
արևոտ – անձրևոտ
ջերմ – սառը

2. *գույների անունները նշանակող բառազույգեր.*

* *ոսկեգույն, վառ դեղին, կարմիր, մանուշակագույն, նարնջագույն, երկնագույն, գույնզգույն.*

* *մոխրագույն, արծաթագույն, շագանակագույն, սև, գորշ, դժգույն դեղին.*

3. *բառակապակցություններ.*

* *չվող կռունկներ, գորշ ամպեր, բարակ անձրև մաղել, մշուշ պատել, ցուրտ ու թաց հող, թափվող տերևներ.*

* *կապույտ երկինք, ջերմ արև, քաղցրահամ մրգեր, գույն-գույն տերևներ, դեղնած դաշտեր, անտառը նախշուն ներկել, բերքառատ այգիներ:*

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ամպրոպ չկա, ամպ չկա,
Ձմեռ չկա, ձյուն չկա,
Միշտ գարո՛ւն է ու գարո՛ւն
Մանուկների աշխարհում:

Ծաղիկներ կան անթառամ,
Թռչուններ կան հավարան,
Արևը մայր չի մտնում
Ծաղիկների աշխարհում:

Լուսիկ Բառնակյան

Մուշեղիկին քնից արթնացնում են արևի շողերը

Մուշեղիկը վերադարձավ. որտեղի՞ց՝ արևի մոտից...

Նա բռնել էր արևի առաջին շողերը, առաջին գույները, առաջին ջերմությունը և տուն բերել: Արևոտ էին նրա աչքերը, մազերը, փոքրիկ քթիկն ու թաթիկները:

Նա վաղ առավոտյան իր ուսուցչուհու և իրենց դասարանի երեխաների հետ գնացել էր՝ արևածագը դիտելու:

Եվ ահա վերադարձել էր՝ արևոտ, արևի մեջ թաթախված...

Իզո՞ւր, իզո՞ւր էր շտապում արագ-արագ պատմել կիսամութի, երկնքի, կարմիր ամպերի ու արևի շողերի մասին ... Միևնույն է, այդ բոլորը բառերով պատմել չէր լինի:

– Մայրի՛կ, դու դիտե՞լ ես արևածագը: Տեսե՞լ ես՝ ինչպե՛ս են արևի շողերը քաշո՛ւմ-քաշո՛ւմ և դուրս հանում հսկա արևին:

– Տեսել եմ, տղա՛ս:

– Իսկ հայրի՞կը:

– Հայրիկն էլ է տեսել:

– Նազի՞կը:

– Ո՛չ, Նազիկը դեռ փոքրիկ է. երբ մեծանա, դառնա դպրոցական, նա էլ կտեսնի արևածագը:

Մուշեղիկը նայում էր քույրիկին ու մտածում. «Սիրելի՛ս, արժե դրա համար շուտ մեծանալ. շտապի՛ր»:

Այդ օրվանից մայրիկն այլևս ձայն չէր տալիս տղային: Նրան քնից արթնացնում էին արևի շողերը, որոնք պատուհանից ներս էին մտնում լուռումունջ, պտտվում ամբողջ սենյակով մեկ, գըտ-նում էին Մուշեղիկի մահճակալը ու կամաց, շա՜տ կամաց իրենց տաք թաթիկներով շոյում տղայի թշիկները: «Վե՜ր կաց, վե՜ր կաց, որ դասից չուշանաս»,– շշնջում էին նրանք այնպե՜ս կամաց, որ միայն Մուշեղիկն էր լսում ...

Հարցեր և առաջադրանքներ

1. *Պատմի՛ր՝ արևածագը դիտելը ի՞նչ ազդեցություն ունեցավ Մուշեղիկի վրա:*
2. *Նկարագրի՛ր՝ արևի շողերը ինչպե՞ս էին քնից արթնացնում Մուշեղիկին:*

ա) Փորձի՛ր նկարել արևածագը:

*բ) Դասարանում կարդացեք «**Իմ վրձինով**» գողտրիկ բա-նաստեղծությունը. ի՞նչ է ուզում փոքրիկը. ինչո՞ւ:*

Հանելուկ

Հավաքեց հանդարտ
Գիշերվա քողը,
Արտ ու հանդերին
Ցողեց իր շողը:

արև
արևածագ
արևաշող

Մասնավոր իմաստ ունեցող հետևյալ բառախմբերից յուրաքանչյուրի դիմաց գրի՛ր նրա ընդհանուր իմաստն արտահայտող բառը.

- ծաղիկ, ծառ, թուփ, խոտ, հասկ...
- մանուկ, ուսուցչուհի, նկարիչ, հայր, Գոհար...
- Երևան, էջմիածին, Գյումրի, Մոսկվա, Փարիզ...
- հաց, կարկանդակ, պանիր, երշիկ, ձու, կաթ...
- մեղու, լուսատտիկ, զատիկ, թիթեռ, մրջյուն...

Հովհաննես Շիրազ

Հովվի տղան

Ես շվի եմ ուզում շինել,
Ես հովիվ եմ ուզում լինել
Սարի լանջին,
Ձով կանաչին:

Կեսօրվա դեմ նստեմ քարին,
Փչեմ, կանչեմ ոչխարներին,
Գետում ջրեմ
Ու տուն բերեմ:

Մայրս կթի ոչխարները,
Ես էլ ուտեմ կաթի սերը,
Մի քիչ մնամ,
Հանգստանամ:

Ապա ջոկեմ գառը մորից
Ու ոչխարիս հոտը նորից
Քշեմ տանեմ,
Սարերն հանեմ:

Այսպես մինչև իրիկնադեմ
Շվիս փչեմ,
Էյ-հե՜յ կանչեմ.
Քանի սարում հայրիկս կա,
Գայլը հոտիս մոտիկ չի գա...

օր
այսօր
կեսօր

Հարցեր և առաջադրանքներ

1. Հովվի փղան ինչո՞ւ էր ինքն էլ ուզում հովիվ դառնալ:
2. Ինչո՞ւ էր նա վստահ, որ գայլը իր հոտին մոտիկ չի գա:
3. Դո՞ւ ինչ ես ուզում դառնալ. ինչո՞ւ:

Տանը կարդա՛ «**Ինչ դառնալ**» բանաստեղծությունը:

Կոչվում է՝

ձկների խումբը՝ վտառ,
թռչունների խումբը՝ երամ,
մեղուների խումբը՝ պարս,
գայլերի խումբը՝ հոմակ,
կովերի խումբը՝ նախիր,
ձիերի խումբը՝ երամակ,
ոչխարների խումբը՝ հոտ:

Ի՞նչ են տալիս՝

շերամ → մեղրաբս

կաթ
ձու
մեղր
բուրդ

Կարդա՛ հետևյալ բառերը. ուշադրությո՛ւն դարձրու բ բաղաձայնի գրությանն ու արտասանությանը.

բարդի, բերք, բողբոջ, բուրմունք.

երբ, նուրբ, սրբիչ, համբույր, դարբին, խաբել:

Ճի՛շտ տեղադրիր բառերը.

Ձնծաղիկը ... գույն ու բույր ունի: Հիանալի շողիկը զարմանալի ... նրա փնփուշ թերթիկները: ... ձնծաղիկն արթնանում է, ... իր թաց աչիկները:

երբ
սրբել
նուրբ

Ռոլանդ Շառոյան

Աշնան կիրակի օր

Գյուղի *խոր աշուն* էր, օրը՝ կիրակի: Գևորգն արթնացավ՝ Մարիամ տատի համբույրը ճակատին:

– Այսօր իմ թոռնիկը յոթ տարեկան է դառնում, – ասաց տատիկը՝ շոյելով նրա գլուխը:

Գևորգի *ականջին հասավ* գառան *բարակ մայունը:*

– Տա՛տ, ինչո՞ւ գառնուկին արոտ չես ուղարկել:

– Այսօր քո *ծննդյան օրն է,* պիտի մորթենք գառնուկը:

Գևորգը շատ տխրեց. մայր ոչխարը հիվանդացել ու սատկել էր, և ամբողջ ձմեռ ինքն ու գառնուկը միասին խաղացել ու մեծացել էին: Առաջին օրերին գառնուկը չէր կարողանում կանգնել. Գևորգն էր բռնում, որ չընկներ: Հիմա արդեն խենթ գառնուկ էր դարձել: Ճակատի սպիտակ խալը մի առանձին գեղեցկություն էր տալիս նրան:

Գևորգն արագ հագնվեց ու վազեց այգի: Ուշադիր *նայեց շուրջը.* մարդ չերևաց: Արձակեց պարանը, գառնուկին *դուրս բերեց փողոց* ու քշեց դեպի ձոր:

Քաղաքից վերադարձան Գևորգի հայրիկն ու մայրիկը. տեսակ-տեսակ ուտելիքներ ու

խաղալիքներ էին բերել: Հայրիկը վերցրեց դանակն ու մտավ այգի, բայց գառնուկը չկար:

– *Ծիրանի ծառից* կապած է, տղա՛ս, – ասաց տատը:

Սակայն այգում ո՛չ գառնուկ կար, ո՛չ էլ պարան: Չկար նաև Գևորգը: Հարևանն ասաց, որ Գևորգին ձորում է տեսել գառան հետ:

Քիչ անց ձորը լցվեց կանչերով.

– Գևո՜րգ, Գևո՜րգ, որտե՞ղ ես...

Ձորը արձագանքեց, և մարող ձայնի միջից գառան բարակ մայուն լսվեց: Հայրը գնաց ձայնի կողմը. *թեթև ժպիտը* դեմքին՝ *անուշ քնել էր* Գևորգը, իսկ ճերմակճակատ գառնուկը, նրա կողքին նստած, հանգիստ որոճում էր:

Աշնան խաղաղ երեկո էր, օրը՝ կիրակի...

արձագանք
արձագանքել

Հարցեր և առաջադրանքներ

1. *Գևորգը ինչո՞ւ տխրեց:*
2. *Նա ի՞նչ հնար մտածեց գառնուկին փրկելու համար:*
3. *Դո՞ւ ինչպես կվարվեիր:*
4. *Շարունակի՛ր պատմությունը. ի՞նչ եղավ հետո:*
5. *Տեքստում թեք գրված կապակցություններն ասա՛ նույն կամ մոտ իմաստն ունեցող այլ բառերով կամ արտահայտություններով:*

Իսկ դու կարո՞ղ ես քո մասին ասել.

	այո՛	ո՛չ
Ես սիրում եմ կենդանիներին:	☐	☐
Ես հոգատար եմ կենդանիների նկատմամբ:	☐	☐

Ճանաչի՛ր և շարունակի՛ր.

Խոտակեր կենդանիներ – *ոչխար, այծ, կով, ձի, էշ...*

Մսակեր կենդանիներ – *շուն, կատու, աղվես, գայլ, առյուծ...*

Ամբողջացրո՛ւ նախադասությունները՝ գրելով, թե Մոխրոտիկը ի՛նչ գործեր է անում շաբաթվա օրերին.

Երկուշաբթի ... :

Երեքշաբթի ... :

Չորեքշաբթի ... :

Ուրբաթ ... :

Հինգշաբթի ... :

Կիրակի ... :

Շաբաթ ... :

Լիպարիտ Սարգսյան

Ծվին

Հազար նվագ
Ունի թևին
Պապիս գնած
Փոքրիկ շվին:

Երբ շուրթերին է
Մոտեցնում,
Երգերով է
Տունը լցվում:

Մեղեդիներ՝
Քնքո՜ւշ ու տա՜ք,
Կյանք են առնում
Մատների տակ:

Բայց երբ ես եմ
Ձեռքս առնում,
Ցվծվում է
Ու խռխռում:

Ցիծաղում է
Պապս թաքուն.
–Ախր, մեռնեմ
Ես քո հոգուն,

Նախ սովորի՛ր
Նրա լեզուն,
Նվագել ես
Եթե ուզում:

Սիրտ, հոգի է
Ամբողջովին
Այս եղեգնյա
Փոքրիկ շվին:

Պիտի նրան
Սի՜րտ նվիրես,
Ամբո՜ղջ հոգով
Պիտի սիրես:

Ու աշխատես
Դու շարունակ,
Որ երգ ծնվի
Մատներիդ տակ:

Հարցեր և առաջադրանքներ

1. *Ինչո՞ւ փոքրիկը շվի նվագելու ցանկություն ունեցավ:*
2. *Նրան հաջողվե՞ց նվագել. ինչո՞ւ:*

Առած

Կաթիլ-կաթիլ գետ կդառնա:

ամբողջ
ամբողջովին

Պապիկի խրատներից

Աշխատանքը հաջողության առաջին պայմանն է: Աշխատի՛ր և անպայման հաջողության կհասնես:

Ճանաչո՞ւմ ես.



Կազմի՛ր բառակապակցություններ.

փոքրիկ	շվի
քնքուշ	մեղեդի
եղեգնյա	գառնուկ
տաք	խալ
խենթ	մայուն
սպիտակ	երեկո
խաղաղ	օր
աշնանային	

Քո կազմած բառակապակցությունները գործածելով՝ գրի՛ր մի փոքրիկ հեքիաթ՝ **«Իմ կախարդական շվին»** վերնագրով:

Դանիել Սարգսյան

Փոքրիկ Շոպենը

1

Լեհ հանճարեղ կոմպոզիտոր և դաշնակահար Ֆրիդերիկ Շոպենը տասներեք տարեկան էր: Նրա հայրը տանը երաժշտության դասեր էր տալիս: Մի անգամ ընդունարանում հավաքվել էին նրա աշակերտները և սպասում էին իրենց ուսուցչին: Մոռանալով, որ կից սենյակում պառկած է Շոպենի հիվանդ մայրը, տղաները սկսեցին գոռգոռալ ու աղմկել: Մայրն իր մոտ կանչեց Շոպենին ու խնդրեց.

– Ֆրիդերի՛կ, սիրելի՛ս, գնա՛ և ասա՛, որ հանգիստ մնան. չէ՞ որ ես հիվանդ եմ:

Ֆրիդերիկն իսկույն վազեց տղաների մոտ և փորձեց լռեցնել նրանց, բայց ոչ ոք ուշադրություն չդարձրեց փոքրիկի վրա: Տղան բարկությունից քիչ մնաց՝ լաց լիներ:

Հանկարծ մի միտք ծագեց նրա գլխում. նա շտապեց դեպի դաշնամուրը, նստեց ու սկսեց նվագել: Սկզբում աղմուկի մեջ ոչինչ չէր լսվում, բայց հետզհետե սենյակը լցվեց իրիկնային նուրբ մեղեդիներով: Դրանք այնքան գեղեցիկ ու թովիչ էին, կարծես իսկապես երեկո լիներ. *կապույտ մշուշը հետզհետե փռվում էր դաշտերի վրա, լեռների գագաթները սուզվում էին մթության մեջ, դաշտից տուն էին դառնում հնձվորները, և կամաց-կամաց ամեն ինչ խաղաղվում էր...*

2

Շուտով Ֆրիդերիկը նկատեց, որ սենյակում բոլորը լռել են, բայց նա շարունակում էր նվագել...

Երեկոյին փոխարինեց գիշերը: Լռեցին շշուկները, և իրար հետևից մարեցին գյուղական ճրագները: Բոլորը քնած էին: Գիշերային լռության մեջ լսվում էր միայն ծղրիդի ճռռոցը...

Ֆրիդերիկի հայրը, որ արդեն վերադարձել էր, մտավ սենյակ և զարմացած կանգ առավ դռների մեջ. տղաները քնել էին աթոռներին՝ ամեն մեկն իր գործիքը գրկած: Միայն փոքրիկ Ֆրիդերիկն էր ինքնամոռաց[1] նվագում:

– Իսկ հիմա արթնացրո՛ւ տղաներին, Ֆրիդերի՛կ, – ասաց հայրը՝ շոյելով նրա մազերը:

Ու տղան ուժգին հարվածեց դաշնամուրի ստեղներին. *գիշերային խաղաղությունն ընդհատվեց. հեռվում խուլ որոտացին ամպերը, և փայլատակեց կայծակը. քամուն հաջորդեց փոթորիկը, ապա հորդառատ անձրև սկսվեց...*

Հանկարծ տղաները վեր թռան և խառնվեցին իրար:

Իսկ փոքրիկ Շոպենը կանգնել էր դաշնամուրի մոտ և ուրախ քրքջում էր:

[1]**ինքնամոռաց** - ինքն իրեն մոռացած

Նվագ
Նվագել

Հարցեր և առաջադրանքներ

1. Շոպենը երեխաներին լռեցնելու ի՞նչ հնար մտածեց. դա հաջողվե՞ց նրան:
2. Նկարագրի՛ր երեկոյի և գիշերվա երաժշտական պատկերները, որոնք քուն բերեցին երեխաներին:
3. Նկարագրի՛ր՝ երաժշտական ո՞ր պատկերը արթնացրեց տղաներին. վերնագրի՛ր այն:
4. Դասարանում լսեցե՛ք Ֆրիդերիկ Շոպենի ստեղծագործություններից մեկը և նկարագրեցե՛ք, թե ի՞նչ պատկերներ «տեսաք»:

Ասացվածքները

- Երաժշտությունը քնքշացնում է հոգին:
- Երաժշտությունը բոլորին ծանոթ մայրենի լեզու է:

1. Կարդա՛ հետևյալ բառերը. ուշադրությո՛ւն դարձրու դ բաղաձայնի գրությանն ու արտասանությանը.

դաշտ, ծղրիդ, հիվանդ, դաշնամուր.

մարդ, վարդ, զարդ, բուրդ, որդի, խնդրել, կենդանի, ընդունարան:

Արտագրի՛ր՝ կետերի փոխարեն գրելով դ կամ թ.

Վարդն ու զարդը

(ժողովրդական)

Ցողը իջավ լուռ, հուշիկ,
ժպտաց վար•ը անուշիկ:
– Ի՞մն է ցողիկն այս արծա•,
Ոչ ոք չունի նման զար•:
Արևն ելավ հան•արտիկ,
ժպտաց զվար•, անուշիկ:
Ցողը հալվեց խիստ տո•ից,
Վար•ը շիկնեց ամո•ից:

2. Կարդա՛ և ուշադրությո՛ւն դարձրու հետևյալ անունների գրությանն ու արտասանությանը.

Զվարթ, Լիլիթ, Դավիթ, Դանիել.

Նվարդ, Վարդան, Վարդիթեր, Սեդրակ:

	Արտագրի՛ր բառերը՝ կետերի փոխարեն գրելով՝ դ կամ թ.
	ար•նանալ, վան•ակ, կեն•անի, թի•եռ, մար•, զը-վար•, կիր•, բուր•, թեր•, շր•ունք, հոր• *(կովի ձագ)*, հոր• *(առայր)*, խն•րանք, մոր•ի, մաղ•ել:

Ըստ Վ. Օսեևայի

Հրաշալի բառը

1

Երկար սպիտակ մորուքով մի ծերունի նստած էր նստարանին և ձեռնափայտով ինչ-որ բան էր գծում ավազի վրա:

– Տե՛ղ տվեք,– ասաց Սաշան բարձր ու կոպիտ ձայնով և նստեց նստարանի ծայրին:

Ծերունին տեղ տվեց և նայելով տղայի կարմրած ու բարկացած դեմքին՝ ասաց.

– Քեզ հետ ինչ-որ բան է պատահել. դու քիչ առաջ գոռացել, լաց ես եղել, հետո էլ մեկի հետ կռվել ես...

– Ոչ ոք ինձ չի սիրում, – ասաց Սաշան և թևով սրբեց արցունքները. – բոլորը բարկանում են ինձ վրա, ինչ ուզում եմ, չեն տալիս...

Ծերունին շոյեց երկար մորուքը և ասաց.

– Դու երևի կոպիտ ես խոսում բոլորի հետ: Լսի՛ր, տղա՛ս, ես ուզում եմ քեզ օգնել: Մի հրաշալի բառ կա. այդ բառն ում էլ ասես, քեզ կլսի:

Սաշան աչքերը չռեց:

– Ես քեզ կսովորեցնեմ այդ բառը: Բայց հիշի՛ր, որ այդ բառը պետք է արտասանել մեղմ ձայնով և ուղիղ նայելով նրա աչքերի մեջ, ում հետ խոսում ես:

Ծերունին տղայի ականջին ինչ-որ բան ասաց և ավելացրեց.

– Դա հրաշալի բառ է, բայց չմոռանաս, թե ինչպե՛ս պետք է ասես այն:

Սաշան վեր թռավ տեղից և վազեց տուն:

2

Լենան, սեղանի առաջ նստած, նկարում էր: Կանաչ, կարմիր, դեղին, կապույտ ներկերը թափված էին սեղանի վրա: Սաշային տեսնելով՝ նա իսկույն ներկերը ծածկեց ձեռքերով:

Սաշան մոտեցավ քրոջը և նայելով նրա աչքերի մեջ՝ ասաց.

– Լե՛նա, խնդրո՞ւմ եմ, ինձ մի նե՞րկ տուր...

Քույրը լայն բացեց աչքերը և ձեռքերը քաշելով ներկերի վրայից՝ քթի տակ ասաց.

– Ո՞րն ես ուզում...

– Կապո՛ւյտը, – անհամարձակ ասաց Սաշան:

Նա ներկը վերցրեց, գնաց-եկավ սենյակում ու ներկը հետ տվեց քրոջը. նրան ներկ հարկավոր չէր. նա ուզում էր փորձել ծերունու սովորեցրած հրաշալի բառի ուժը:

Սաշան շտապեց խոհանոց:

Տատը գազօջախի վրայից վերցնում էր տաք բլիթները:

Թոռը մոտեցավ տատին, նայեց նրա աչքերի մեջ ու կամացուկ ասաց.

– Տատի՛կ, խնդրո՞ւմ եմ, ինձ մի բլի՞թ տուր:

Տատը զարմացավ:

– Տա՞ք, թե՞ սառն ես ուզում, բալի՛կս, – ասաց նա՝ ընտրելով ամենալավը:

Սաշան ուրախությունից վեր թռավ. «Հրաշալի՜ է, հրաշալի՜»,– կրկնում էր նա ինքնիրեն՝ վազելով դեպի պուրակ. նա շտապում էր, որ շնորհակալություն հայտներ ծերունուն:

Հարցեր և առաջադրանքներ

1. *Ինչո՞ւ էին բոլորը վատ վարվում Սաշայի հետ:*
2. *Սաշան ինչի՞ շնորհիվ փոխեց իր բնավորությունը. դա ի՞նչ օգուտ տվեց նրան:*
3. *Ի՞նչ դաս քաղեցիր այս պատմությունից:*

Շնորհակալական ի՞նչ արտահայտություններ գիտես. ե՞րբ պետք է գործածես դրանք:

Շուրջասելուկ

Զուկ գցելով, ձուկ կուլ տալով,
Մուկ գցելով, ձուկ կուլ տալով՝
Ապրում եմ ես՝ մկան տեղ՝ ձուկ
Ու ձկան տեղ՝ ձուկ կուլ տալով:

արբել
արբիչ

Իսկ դու կարո՞ղ ես քո մասին ասել.

	այո՛	ո՛չ
Ես բարեկիրթ եմ:	☐	☐
Երբ ես սխալվում եմ, ներողություն եմ խնդրում:	☐	☐

Կարդա՛ և ուշադրությո՛ւն դարձրու ձ բաղաձայնի գրությանն ու արտասանությանը.

ձեռք, ձայն, օձիք, արձագանք.

բարձր, բարձ, վրձին, ընդարձակ, արձակուրդ, օձ, համարձակ, դեղձ:

Արտագրի՛ր նախադասությունները՝ ճիշտ տեղադրելով տրված բառերը.

Սուրենն ապասում էր ամառային ...: Նա պարբասրել էր գրաֆերկն ու ...: Սուրենն ուզում էր նկարել մեր ... սարերը և ... դաշտերը: Իսկ ամենից շատ նա սիրում է նկարել հայկական ...:

բարձրիկ
ընդարձակ
վրձիններ
արձակուրդ

Լուսիկ Բառնակյան

Պարսատիկը

1

Լևոնը պարսատիկ ուներ: Նա քարը դնում էր պարսատիկի մեջ և ուզած տեղը խփում:

Լևոնը նշան էր բռնում դիմացի պատի վրա հերթով շարված ճնճղուկներին, որ հենց նոր էին դուրս եկել իրենց բներից՝ փոքրիկ ճուտիկների մոտից. նրանք հայրիկներ ու մայրիկներ էին:

Լևոնը խփում էր ճնճղուկներին, իսկ Ջոնիկը կանգնում էր նրա կողքին ու տխուր նայում: Նայում էր պատի ճեղքերից գլուխները հանած ձագուկներին, նայում էր ընկերոջն ու չգիտեր՝ ի՞նչ աներ, ի՞նչ ասեր...

– Եթե մատիտի լավ սրիչ տամ, պարսատիկդ կտա՞ս, – ասում էր Ջոնիկը:

– Ո՛չ:

– Երկու հատ ընդհանուր տետր և մեկ տուփ գունավոր մատիտ տա՞մ...

– Չե՛մ տա...

Գիշերները երազում Ջոնիկը տեսնում էր ճնճղուկի՝ փափլիկ աղվամազով[1] ծածկված փոքրիկ ձագուկներին...

Օրերը ցրտել էին: Ճնճղուկները շարվում էին պատի վրա կամ իջնում դիմացի այգին՝ իրենց բալիկների համար կեր գտնելու:

Լևոնը շարունակում էր իր պարսատիկով հալածել նրանց:

2

Թափվում էին ձյան փափուկ փաթիլները: Բլրակի վրա խաղում էին երեխաները. նրանց ուրախ աղմուկն ու աղաղակը խառնվում էին ձյան մաքուր ու սպիտակ փաթիլներին:

Ջոնիկը սահնակ ուներ, իսկ Լևոնը՝ ոչ:

– Կտա՞ս սահնակդ նստեմ, – ասաց Լևոնը:

–Կուզե՞ս՝ քեզ տամ:

–Ինձ ու ի՞նձ,– զարմացավ Լևոնը:

–Այո՛, փոխարենը դու պարսատիկդ կտա՞ս:

–Կտա՛մ,–ուրախ պատասխանեց Լևոնը:

Լևոնը, սահնակի պարանը բռնած, մնաց կանգնած: Նա ասես քարացել էր ու տեղից շարժվել չէր կարողանում. Չոնիկը տվեց իր նոր ու գեղեցիկ սահնակը, փոխարենը վերցրեց հին պարսատիկը և...

Ո՛չ, Չոնիկը փոքրիկ քարեր չէր փնտրում... Նա ձյան տակից մի մեծ քար հանեց ու ջարդեց պարսատիկը: Ապա կտորները շպրտեց այս ու այն կողմ և իր արածից գոհ՝ նայեց պատի վրա անհոգ շարված ճնճղուկներին:

Լևոնն էլ նայեց. ձմռան արևի թույլ շողերի տակ պսպղում էին ձյան փաթիլները, և ճնճղուկներն ուրախ էին...

Չոնիկը վազեց բլրակի վրա խաղացող երեխաների մոտ:

Լևոնը նայեց Չոնիկի հետևից, նայեց սահնակին. տխրեց: Նա այլևս խաղալ չէր ուզում. ուզում էր տուն վերադառնալ:

Ճանապարհին Լևոնը սահնակը թողեց Չոնիկենց դռան առջև...

պսպղալ
պսպղուն

[1]**աղվամազ** -նուրբ ու փափուկ մազ

Հարցեր և առաջադրանքներ

1. *Զոնիկը ինչո՞ւ էր փիրում և Լևոնից խնդրում պարսապիկը:*
2. *Ո՞ր փողերից է երևում, որ Զոնիկը նրբանկատ ու լավ ընկեր է. կարդա՛ այդ փողերը:*
3. *Զոնիկին ինչպե՞ս հաջողվեց փրկել ճնճղուկներին:*
4. *Լևոնը ի՞նչ դաս առավ Զոնիկի վարմունքից:*

Խնդրում կարո՞ղ ես քո մասին ասել.

	այո՛	ո՛չ
Ես չեմ չարչարում կենդանիներին:	☐	☐
Ես օգնում եմ փոքրերին ու փկարներին:	☐	☐

Ճանաչի՛ր և շարունակի՛ր.

Երկոտանի կենդանիներ – *հավ, կարապ, ճնճղուկ, ջայլամ...*
Չորքոտանի կենդանիներ – *եղջերու, ձի, կով, առյուծ...*

Կարդա՛ և ուշադրությո՛ւն դարձրու ջ բաղաձայնի գրությանն ու արտասանությանը.

ջերմոց, ջրվեժ, ջինջ, քրքջալ.

արջ, որջ, միջատ, մրջյուն, վերջ, իջնել, չղջիկ, զղջալ:

1.	Արտագրի՛ր տրված բառերը առանձին սյունակներով՝ օրինակի պես.
	աջ, մեջք, արջ, միջատ, կամուրջ, ջնջոց, վերջ, նարինջ, ջութակ, ջրհոր, չղջիկ: Օրինակ՝ ջ-ջ | չ-ջ

2.	Արտագրի՛ր՝ հարցերին պատասխանելով.
	Ի՞նչ է կոչվում արջի բույնը: *Ի՞նչ են ասում հագուստ կարողին:* *Խաղողն ու դեղձը ի՞նչ են:* *Ի՞նչ համ ունի մեղրը:* *Ինչո՞վ են սրբվում լողանալուց հետո:* *Ո՞րն էր «հրաշալի» բառը:* *Ո՞վ է վարում օդանավը:* Օրինակ՝ *Հագուստ կարողին ասում են* ***դերձակ:***

Յուրի Սահակյան

Պայման

–Բարև՛,–ասաց փոքրիկ տղան:
–Հազա՞ր բարին,–ասացի ես:
–Ընկեր չունե՞ս,–հարցրեց տղան:
–Այստեղ չունեմ,–ասացի ես:
–Կուզե՞ս ինձ հետ ծանոթանալ:
–Ծանոթանա՛նք,–ասացի ես:
–Անունդ ի՞նչ է,–հարցրեց տղան:
Իմ անունը ասացի ես:
Հետո այսպես ասաց տղան.
–Արի այնքա՞ն ծանոթանանք,
Որ սկսենք մտերմանալ:
Հետո այնքա՞ն մտերմանանք,
Որ սկսենք ընկերանալ:
Հետո այնքա՞ն ընկերանանք,
Որ սկսենք եղբայրանալ:
Հետո այնքա՞ն եղբայրանանք,
Որ բաժանվել չկամենանք

Ո՛չ խաղի մեջ,
Ո՛չ փորձանքում,
Ո՛չ էլ ամբո՞ղջ, ամբո՞ղջ կյանքում:

Եղբայր
Եղբայրանալ

Հարցեր և առաջադրանքներ

1. *Փոքրիկ տղան ինչո՞ւ էր ընկեր փնտրում. ինչո՞ւ պետք է ընկեր ունենալ:*
2. *Նա ինչպիսի՞ ընկեր էր փնտրում. ինչո՞ւ է բանաստեղծությունը վերնագրված «**Պայման**»:*

*Տանը կարդացե՛ք և դասարանում քննարկեցե՛ք «**Ազնիվ զինվորը**» և «**Վատ ընկերը**» փոքրիկ պատմվածքները:*

Ասացվածքները

Ընկերը փորձանքի մեջ է ճանաչվում:
Մարդն իր ընկերներով է հարուստ և ուժեղ:

Թեմայի ամփոփում

1. *«**Մանկական աշխարհի**» մասին դասերից ո՞րը ավելի շատ հավանեցիր. ինչո՞ւ:*
2. *Գրի՛ր մի փոքրիկ պատմություն՝ «**Իմ մտերիմ ընկերը**» վերնագրով՝ օգտվելով տրված հարցերից և բառերից.*

անկեղծ, բարի, աշխատասեր, հոգատար, ուշադիր, խելացի, հնարամիտ, ընկերասեր, գթասիրտ, ազնիվ, ճշմարտախոս...

Հարցեր

1. *Ո՞վ է քո մտերիմ ընկերը:*
2. *Ի՞նչ հատկանիշներ ունի նա:*
3. *Ի՞նչ լավ գործեր եք կատարում միասին:*
4. *Ինչո՞ւ պետք է ընկեր ունենալ:*

ԶՅՈՒՆԵՐԻ ԹԱՎԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ



Ո՞վ է եկել փանիքներին
Սավան փռել այս գիշեր,
Սառցե մատով պատուհանին
Նախշեր քաշել այս գիշեր...

Գեղամ Սարյան

Փափուկ ձյուն

Ձյո՜ւն, փափո՜ւկ ձյուն, սպիտա՜կ ձյուն,
Ձգո՜ւյշ իջիր դաշտերին.
Ծաղիկները մտել են քուն,
Հողն է նրանց անկողին:

Հանդա՜րտ, կամա՜ց իջիր այնպես՝
Ծաղիկները չարթնանան,
Ծածկի՜ր նրանց քնքուշ ու հեզ.
Ձգո՜ւյշ, զգո՜ւյշ անսահման:

Ձյո՜ւն, փափո՜ւկ ձյուն, սպիտա՜կ ձյուն,
Հանգի՜ստ, խաղա՜ղ իջիր վար.
Ծաղիկները մտել են քուն,
Ծաղիկները ցրտահար[1]:

[1]**ցրտահար** – ցուրտը տարած՝ ցրտից սառած

Հարցեր և առաջադրանքներ

1. *Հեղինակը ի՞նչ է խնդրում ձյունից. ինչո՞ւ:*
2. *Արտասանի՛ր այս գողտրիկ բանաստեղծությունը հեղինակի պատկերած տրամադրությամբ՝ քնքուշ ու հանդարտ:*

*Հաճելի կլինի սովորել նաև «**Ձյուն**» երգը և երգել դասարանում:*

Հանելուկներ

Օրը պաղ դարձավ,
Ամպը մաղ դարձավ,
Նրա թիթեռը
Մանկան խաղ դարձավ:

Չեմ սիրում համբույր,
Ժպիտ, ջերմություն.
Իմ սիրտը սառն է,
Իսկ անունս՝ ...

Հիշո՞ւմ ես, որ...

Վանկը կազմված է լինում մեկ կամ մեկից ավելի հնչյուններից, որոնք արտասանվում են միանգամից: Բառերը լինում են միավանկ և բազմավանկ:

Օրինակ՝ *ձյուն, փաթիլ, ցրտահար:*

	Արտագրի՛ր հետևյալ բառերն առանձին սյունակներով՝ միավանկ, բազմավանկ.
	փափուկ, հանդարտ, հող, քուն, անկողին, ծաղիկ, անսահման, արթնանալ, դաշտ, ամպ, հանգիստ, օր:

Ըստ Գեղեցիկ Մովսիսյանի

Փաթիլներն են բերել երկնքից

Փոքրիկ Շուշանը մտածկոտ նայում էր թափվող փաթիլներին...

Նա, առանց աչքերը փաթիլներից կտրելու, սեղանից վերցրեց ջուրթակը և աղեղը հպեց[1] լարերին: Բաց օդանցքից դուրս հոսեց մի քնքուշ մեղեդի և գրկեց պտտվող փաթիլներին: Շուշանը ժպտաց... Փաթիլները լսում էին նրան... Փաթիլներն ուրախ էին, որ Շուշանը մտածեց իրենց մասին:

Ճերմակ ու քնքուշ փաթիլները պտտվում էին նազանքով, մոտենում իրար, հեռանում, նորից պտտվում, խռնվում[2] ու մեկ էլ ցրվում՝ թեթև՜ ու սահո՜ւն...

Դա երկնային պար էր՝ փաթիլների պար... Ոչ ոք մինչև այդ չգիտեր այդ պարի երաժշտությունը... Միայն փոքրիկ Շուշանն զգաց այն. հոգու մեջ երաժշտություն ծնվեց, և նա նվագեց փաթիլների պարը:

Փաթիլներն իրենց ճերմակ ու նուրբ ժպիտներով դուրս էին կանչում աղջկան:

– Շուշանը դուրս եկավ պատշգամբ՝ շարունակելով ոգևորված նվագել...

Փաթիլներն արագ շրջապատեցին նրան. մի քանիսը համբուրեցին Շուշանին՝ դառնալով համբույրի թաց հետք, մի քանիսն էլ կախվեցին նրա թարթիչներից՝ կարծես ցանկանալով իրենց քնքուշ փայլը նրա աչքերին նվիրել...

Վերջապես փաթիլները հոգնեցին և ճոճվելով իջան գետնին. Շուշանն էլ իջեցրեց հոգնած ձեռքը և նայեց ձյունածածկ տանիքներին:

Հանկարծ ծափահարություններ լսվեցին... Շուշանը սթափվեց և նայեց ժպտացող մարդկանց...

– Ի՞նչ էիր նվագում, փոքրի՛կ, – լսեց Շուշանը վերևից:

– Ես նվագում էի փաթիլների պարը, – շիկնելով պատասխանեց նա:

– Իսկ ո՞վ է հեղինակը, – կրկին հարցրեց երաժիշտը:

Շուշանը շփոթվեց, մի պահ մտածեց և ասաց.

– Չգիտեմ, *փաթիլներն էին իրենց հետ բերել երկնքից...*

[1]**հպել** – մոտեցնելով կպցնել
[2]**խռնվել** – այստեղ՝ իրար վրա գալ՝ թափվել

երաժիշտ
երաժշտություն

Հարցեր և առաջադրանքներ

1. *Նկարագրի՛ր փաթիլների պարը:*
2. *Ի՞նչ երաժշտություն ծնվեց Շուշանի հոգում, ինչո՞ւ:*
3. *Փաթիլներն ինչպե՞ս ընդունեցին այդ երաժշտությունը:*
4. *Պատմվածքն ինչո՞ւ է վերնագրված* ***«Փաթիլներն են բերել երկնքից»****. ուրիշ ի՞նչ վերնագիր կդնես այս պատմությանը:*

Դասից ընտրի՛ր և արտագրի՛ր քեզ դուր եկած գեղեցիկ պատկերներն ու նկարագրությունները:

Վանկընկնը

Արփին հեպը
Երբ խոսեց,
Նա գունատվեց
Ու հոսեց:

Ցրտից ծնված
Թիթեռ եմ,
Թե ջերմացնես,
Կհալչեմ:

Գալիս է փաթիլ-փաթիլ՝
Ուրախ պարելով,
Գնում է կաթիլ-կաթիլ՝
Արցունք թափելով:

Հիշո՞ւմ ես, որ...

Բառերի մեջ քանի ձայնավոր կա, այնքան էլ վանկ կա:

Օրինակ՝ *պար* –1 ձայնավոր, 1 վանկ,
ծաղ-կա-ման – 3 ձայնավոր, 3 վանկ:

Առանց ձայնավորի վանկ չկա, իսկ ձայնավորը մենակ կարող է վանկ կազմել:

Օրինակ՝ *քըն-քուշ, օ-րո-րոց:*

Արտագրի՛ր հետևյալ բառերը՝ վանկերի բաժանելով. ընդգծի՛ր ձայնավորները և որոշի՛ր, թե քանի՛ վանկ ունի յուրաքանչյուր բառ.

օդանցք, ջութակ, պտտվել, աղջիկ, համբուրել, քնքուշ, ժըպտալ, պատշգամբ, ծյունածածկ, շրջապատել, ծափահարել:

Օրինակ՝ *ծա-փա-հա-րել* – 4 ձայնավոր, 4 վանկ,
պը-տըտ-վել – 3 ձայնավոր, 3 վանկ:

Ուղղագրական և բառակազմական արժեք ունեցող բառափնջեր

գանձ	բուրել	նախշել	արևածագ
գանձապուն	բուրմունք	նախշուն	արևաշող
գանձարան	անձրև	ընկույզ	օր
առաջ	անձրևել	ընկուզենի	այսօր
առաջին	երգ	թռչուն	կեսօր
արձակել	երգիչ	թռչել	արձագանք
արձակուրդ	երգչուհի	թռիչք	արձագանքել
սև	համբույր	դեղձ	ամբողջ
սևաչյա	համբուրել	վրձին	ամբողջովին
ճամփա	ընդամենը	տերև	նվագ
ճամփորդ	ընդհանուր	տերևախիտ	նվագել
ճամփորդել	զգալ	տերևաթափ	սրբել
հեքիաթ	զգացում	արթուն	սրբիչ
հեքիաթային	սառչել	արթնանալ	պսպղալ
հեքիաթասաց	փախչել	զարթնել	պսպղուն
թագ	ծաղիկ	ներքև	եղբայր
թագավոր	ծաղկել	վերև	եղբայրանալ
թագուհի	ծաղկաման	առջև	զգույշ
բույր	նախշ	արև	զգուշանալ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴՈՒ ՄԵՐ ԴՊՐՈՑ ՍԻՐԵԼԻ. Գանձարանն այդ թե բանաս... 3

Իմ հա՛յ լեզու. *Մ. Կապուտիկյան* 4

Մեսրոպ Մաշտոցին. *Խ. Դաշտենց* 5

Առաջին ուսուցչուհին. *Լ. Բառնակյան* 6

Կես խնձոր. *Ըստ Լ. Շանթի* 8

Դպրոցի ճամփան. *Վ. Գրիգորյան* 10

Իմ դասագրքերը. *Մ. Մուրադյան* 12

Երեք հարուստ *(հեքիաթ)* 15

Մտերմիկ խրատ. *Մ. Կապուտիկյան (տպագրվում է առաջին անգամ)* 18

ՄԵՐ ՏՈՒՆԸ. Նկարեցի. *Պ. Խոչատրյան* 19

Հայրս դաշտից տուն եկավ. *Պ. Խոչատրյան* 20

Բարի լո՛ւյս, մայրի՛կ. *Խ. Գյուլնազարյան* 21

Երգ մայրիկիս. *Ն. Միքայելյան* 25

Մայրիկի հաշիվը. *Փ. Աթրե* 26

Իմ հերոս պապը. *Պ. Խոչատրյան* 30

Մեծ մայրիկի նամակը. *Ըստ Զ. Գալեմքարյանի* 31

Ծիծեռնակն ու ծիտիկը. *Պ. Խոչատրյան* 34

Երկու ծաղիկ. *Արշ. Դարբնի* 36

Քամին ու մանուշակը. *Հ. Շիրազ* 39

ՈՍԿԻ ԱՇՈՒՆ. Իջել է աշուն... *Ըստ Գ. Մովսիսյանի* 41

Աշուն. *Ռ. Տոնյան* 42

Աշնան այգին. *Լ. Մարգսյան* 43

Աշուն *Ըստ Է. Օհանյանի* 45

Աշնան նկար. *Ն. Միքայելյան* 48

Տերևաթափ. *Հովհ. Թումանյան* 50

Պարահանդես անտառում. *Լ. Միլևա* 52

Վայրի փանձենու փակ. *Վ. Անանյան* 54

Աշուն. *Հ. Սահյան* 57

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ. Ապրոպ չկա, ամպ չկա... *Սարմեն* 59

Մուշեղիկին քնից արթնացնում են արևի ճառագայթները.
Լ. Բառնակյան 60

Հովվի փղան. *Հովհ. Շիրազ* 62

Աշնան կիրակի օր. *Ռ. Շառոյան* 64

Շվին. *Լ. Մարգսյան* 66

Փոքրիկ Շոպենը. *Դ. Մարգսյան* 69

Հրաշալի բառը. *Ըստ Վ. Օսեևայի* 72

Պարսպափիկը. *Լ. Բառնակյան* 76

Պայման. *Յ. Սահակյան* 79

ՁՅՈՒՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ. Ո՞վ է եկել...
Հ. Հայրապետյան 81

Փափուկ ձյուն. *Գ. Մարյան* 82

Փաթիլներն են բերել երկնքից. *Ըստ Գ. Մովսիսյանի* 83

Ուղղագրական և բառակազմական արժեք ունեցող բառափնջեր 86

Հանելուկները, ասացվածքները, շուտասելուկները, սուտասելուկները՝
Ս. Մկրտչյանի, Ս. Մուրադյանի, Մ. Կորյունի, Վ. Վարդունու, Յ. Սահակյանի...

Քյուրքչյան Անժել Ներսեսի
Տեր-Գրիգորյան Լիլիթ Աշոտի

Մայրենի 2

(2-րդ լրամշակված հրատարակություն)
Հանրակրթական դպրոցի
2-րդ դասարանի դասագիրք

Մաս 1

Հաստատված է
ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից

Նկարիչ՝ Սուսաննա Այվազյան
Համակարգչային ձևավորումը՝ Ն. Գևորգյանի

Չափսը՝ 70x100 1/16, թուղթը՝ օֆսեթ,
տպագրական 5.5 մամուլ, տպաքանակը՝ 8749:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am